




### ԻՐԱՆ ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ ՈՒՆԻ ԹՇՆԱՄՈՒ ԴԵՍ

#### ԽԱՄԻՆԵԻ

Իրանի գերագոյն առաջնորդ Մոճրթապա Խամենեի X ընկերային ցանցին մէջ գրած է, որ «յատուկ ուսումնասիրութիւններ կատարուած են հակառակորդին հակագղելու նոր ռազմավարական ուղղութիւններ գտնելու համար»:



Ան նշած է, որ այս կ'ենթադրէ «քախտմի նոր ուղիներ բանալ այնտեղ, ուր հակառակորդը բաւարար հնարաւորութիւններ չունի»:

«Ուսումնասիրութիւններ կատարուած են նոր ճակատներ բանալու համար, ուր թշնամին քիչ փորձ ունի եւ ուր ան չափազանց խոցելի կ'ըլլայ, իսկ այդ բոլորին աշխուժացումը կ'իրականացուի ռազմական դրութիւնը պահպանելով եւ Իրանի շահերը հաշուի առնելով», - ընդգծած է Խամենեի:

Ան յայտարարուած է, որ այս ծրագիրներու իրականացումը տեղի կ'ունենայ ներգործող իրավիճակի խիստ վերահսկողութեան պայմաններու տակ:

Յայտարարութեան մէջ նշած չէ, թէ որ տարածաշրջաններն ու տարածքները կը դիտարկուին:

### ՄԻ ՍԻՆՓԻՆ. «ՓՈՒԹԻՆԸ ԿՐՆԱՅ «ԶՂՋԱԼ» ՈՒՔՐԱԻՆԱ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԿԱՄԱՐ»

Վերոնշեալ արտայայտութիւնը կրնար աննկատ անցնիլ, եթէ չպատկանէր Ռուսաստանի ամենէն մօտիկ դաշնակիցին՝ Չինաստանի նախագահին:

Արդարեւ, ըստ Financial Times-ին՝ ԱՄՆ-ի նախագահին հետ դռնփակ հանդիպման մը ընթացքին, Չինաստանի նախագահ Սի Շինփին յայտնած է, որ Փութինը ի վերջոյ թերեւս կրնայ «զղջալ» Ռուքրահնա ներխուժելուն համար: Թերթը այս լուրը հաղորդած է հիմնուելով բանակցութիւններուն



մօտիկ քանի մը աղբիւրներու վրայ: Այդ նոյն աղբիւրներուն համաձայն՝ նաեւ Թրանսի առաջարկած է միատրել ԱՄՆ-ի, Չինաստանի եւ Ռուսաստանի ուժերը՝ ընդդէմ Լա Հէյի միջազգային պատժական ատեանին:

Սպիտակ տունը կամ ամերիկեան պաշտօնական աղբիւրները այս մասին որեւէ մանրամասնութիւն չեն հրապարակած:

Financial Times-ը կը նշէ, որ անցեալին՝ Պայտընի հետ բանակցութիւններուն, Չինաստանի նախագահը գերծ մնացած էր նման զնահատականներէ, որոնք կրնան պայմանաւորուած ըլլալ ոչ այնքան խօսակիցին անձով, որքան դէպքերուն արձանագրած զարգացումներով:

### ԴԱՃԻԷ. «ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՎՏԱՐՈՒԿԸ 300 ԿԱԶԱՐ ԱՏՐՊԵՅՃԱՅԻ ԿՎՐԱԹԿԱՆՆԵՐ ԱՏՐՊԵՅՃԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԿԸ ԵՆ»

Ատրպէյճանի նախագահի առաջ օգնական Հիքմէթ Հաճիւ, ելոյթ ունենալով Պաքուի մէջ ընթացող WUF13 (World Urban Forum) միջազգային համաժողովին, 19 Մայիսին պնդած է, թէ անկախութեան առաջին տարիներուն Ատրպէյճանը բախած է «Հայաստանէն՝ ցեղային հիմքով արտաքսուած 300 հազար ատրպէյճանցիներու» տեղաւորման խնդրին:



Սակայն, խորհրդային մարդահամարներու տուեալներով՝ Խորհրդային Հայաստանի մէջ բնակող ատրպէյճանցիներու թիւը երբեք չէ գերազանցած 200 հազարը: 1979 թուականի մարդահամարին համաձայն՝ Հայկական ԽՍՀ-ի մէջ կը բնակէր 160 հազար, իսկ 1989 թուականի մարդահամարին համաձայն՝ 84 հազար ատրպէյճանցի:

### ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ ԿԱՆՊԻՊՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը շաբաթավերջին Վատիկանի մէջ տեսակցեցաւ Հռոմէական Կաթողիկէ եկեղեցոյ քահանայապետ Լեւոն ԺԴ. Սրբազան Պապին հետ:



Սուրբ Աթոռի աղբիւրներու հաղորդումներով՝ Քահանայապետը գրոյցի ընթացքին մտահոգութիւն յայտնեց Լիբանանի ժողովուրդի եւ Միջին Արեւելքի եկեղեցիներու շուրջ ստեղծուած իրավիճակին մասին: «Երբ ձեր երկրի միասնութիւնն ու ամբողջականութիւնը դարձեալ վտանգուած են, մեր եկեղեցիները կոչուած են ամրապնդելու եղբայրական կապերը», յայտնեց Սրբազան Պապը:

### ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵՆՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՍԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԸ ՇԱՐՔ ՍԸ ՁԵՈՆԱՐԿՆԵՐՈՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Կիրակի առաւօտ, Մայիս 17-ին, հասաւ Հռոմ՝ հանդիպում ունենալու Նորին Սրբութիւն Լեւոն XIV քահանայապետի հետ:

Հռոմի Ֆիումիչինօ օղակայանին մէջ Նորին Սրբութիւնը դիմաւորելու ներկայ էին Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչը Վատիկանի մօտ, Վատիկանի պաշտօնատարներու եւ Սեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան անդամներու ընկերակցութեամբ: Արքեպիսկոպոս Պարսամեանի ներկայութիւնը օղակայանին մէջ կ'արտացոլացնէր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ միասնականութեան, փոխադարձ յարգանքի եւ գործակցութեան ոգին:

Մայիսի 18-ի երեկոյեան, Քրիստոնէական միասնութեան խթանման բաժնի ղեկավար Նորին Վեսմութիւն կարտինալ Կուրտ Կոխի հրաւերով, Խաժակ Արքեպիսկոպոս մասնակցեցաւ Նորին Սրբութեան Արամ Ա-ի պատիւ կազմակերպուած պաշտօնական ընթրիքին: Հանդիպումը ընդգծած է Սուրբ Աթոռի եւ Հայ Առաքելական Եկեղեցոյ միջեւ առկայ ջերմ յարաբերութիւններու ու էկոմենիկ երկխօսութեան շարունակական զարգացումը:



Մայիս 19-ին, Քահանայապետական Արեւելեան Հիմնարկին մէջ, որ կը գործէ Քահանայապետական Գրիգորեան համալսարանի հովանիին տակ, Արամ Վեհափառը հանդէս եկաւ հրապարակային դասախօսութեամբ՝ նուիրուած Միջին Արեւելքի եկեղեցիներու առջեւ ծառայած մարտահրաւերներուն: Համալսարանի տեսուչի հրաւերով դասախօսութեանը եւ ապա ճաշին մասնակցեցաւ նաեւ Խաժակ Արքեպիսկոպոսը:



Խաժակ Արքեպիսկոպոս մասնակցեցաւ նաեւ Տոնոս Սանտա Մարտայի մէջ Նորին Սրբութիւն Արամ Ա-ի կողմէ կազմակերպուած ընթրիքին, որը եւս առիթ դարձաւ եղբայրական շփումների եւ մտքերի փոխանակման համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի Հռոմ այցելութիւնը կարեւոր արտայայտութիւն մըն է Հայ Առաքելական Եկեղեցոյ եւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցոյ միջեւ խոր պատմական կապերուն: Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի մասնակցութիւնը այցելութեան կարգ մը միջոցառումներուն աւելի եւս ընդգծեց Սուրբ Աթոռի մօտ հայկական եկեղեցական ներկայացուցչութեան կարեւորութիւնը եւ միջեկեղեցական երկխօսութեան, բարեկամութեան ու գործակցութեան նկատմամբ տեսական յանձնառութիւնը:

# ԱՇԽԱՐՀՆ ԱՅԼԵԻՍ ԲԱԶՄԱԲԵԻԵՌ ԶԷ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Լուսին, քո բախտն արեւից է կախում: Ահա ինչու ես վշտով  
շաղախում,  
երնեկ այն ազգին, որ հուր յախտեան իր գլխի տէրն է արեւի նման:

ՍՈՐԲԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ՊԳՂ, փրոֆեսոր

Օրերս ԱՄՆ-ի նախագահի Չինաստան աննախադեպ այցի արդյունքում յստակ արձանագրուեց մէկ պարզ իրողութիւն. Աշխարհն այլեւս ոչ միաբնու է, ոչ էլ՝ բազմաբնու, այլ երկբնու է: Այո, Թեհրան-Եաթրա-Փոքստան ուղեգծով սահմանուել էր Երկիր մոլորակի երկբնու լինելու համագամարը: Սակայն այն վերջ գտաւ, երբ 1991 թ. աշխարհիս գերագոր կայսրութիւններից Խորհրդային Միութիւնը ինքնալուծարուեց: Արեւմուտքն էլ օգտուեց նպաստաւոր առիթից եւ ՆԱԹՕ-ի համագգեստով շատ արագ ընդարձակուեց ու իրեն իրադրութեան լիարժէք տէրը զգաց: Որոշ ժամանակ անց Խորհրդային

tigroup), Ճիմ Անտերսըն (Coherent), Լարի Քալի (General Electric), Տէյվիս Սոլոմոն (Goldman Sachs), Ճէյքըպ Թէյլըն (Illumina), Մայքլ Միտայախ (Mastercard), Թիմա Փաուրլ (Meta), Սանջա Մեիքոքրա (Micron), Ճենսըն Հուանկ (Nvidia), Քրիսթիանո Անոն (Qualcomm), Էլոն Մասք (Tesla/SpaceX), Ռայլըն Մաքհիլըրնի (Visa), ինքնին առաւել քան խօսում է այդ հանդիպման ֆինանսա-տնտեսական եւ նորագոյն տեխնոլոգիաների տեսանկյունից:

2. Հանդիպման ժամանակ նախագահ Թրամփին արեւի փոքր աթոռ էին տրամադրել, որ տեսողական առումով նա արեւի փոքր երեւայ՝ քան Չինաստանի ղեկավարը:

3. Բանակցութիւնների բացման խօսքում Չինաստանի ղեկավար Խին ասել է, որ «ամբողջ աշխարհը հետեւում է մեր հանդիպմանը: Ներկայումս ամբողջ աշխարհում արագանում է Դարակազմիկ շտեմնում վերափոխում...»:

Լրացման կարգով էլ նշենք, որ ԱՄՆ պատմութեան կազմում էր նաեւ պէտքարտուղար Մարքո Ռուպիոն, որը Չինաստանի կողմից պատժամիջոցների տակ գտնուող անձ է: Որոշ նախնական տեղեկութիւնների համաձայն, այցելութիւնը հնարաւոր է դարձել միայն այն բանից յետոյ, երբ Չինաստանը նրա անուան տառադարձութիւնը փոխեց:

Ամփոփելով նշենք, որ պատմութեան նոր խաչմերուկ է. Մի Ծինփիւնը Թրամփին առաջարկում է աշխարհի վերաբաժանում: 21-րդ դարի ամենասպասուած եւ ճակատագրական հանդիպման ժամանակ Չինաստանի նախագահ Մի Ծինփիւնը, ընդունելով ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփին Փեքինում, հանդէս եկաւ խորքային եւ ծրագրային ուղեբժով: Նա արձանագրեց, որ աշխարհն անցնում է «մէկ դարի ընթացքում շտեմնում տրանսֆորմացիայի» միջով, եւ առաջ քաշեց գլխաւոր հարցադրումները. արդե՞ք Ուաշինկթընն ու Փեքինը կը կարողանան խուսափել «Թուկիդիդեսի ծուղակից» եւ կը ստեղծե՞ն արդե՞ք մեծ տէրութիւնների միջեւ նոր յարաբերութիւններ: Սա զուտ դիւանագիտական ողջոյն չէր, այլ աշխարհակարգի վերակառուցման պաշտօնական առաջարկ-պահանջ: Սա համընդհանրական քաղաքականութեան գազաթնակէտն է: Մրանով հզօրացող Չինաստանը մարտահրաւիր է նետում գոյութիւն ունեցող առաջնորդ ԱՄՆ-ին, իսկ դրա արդիւնքը գրեթէ միշտ լայնամասշտապ պատերազմն է: Սակայն Փեքինը դա ասում է ոչ թէ վախտուրած, այլ յաղթողի եւ վստահ խաղացողի դիրքից: Որովհետեւ Թրամփը Փեքին է ժամանել խոցելի կարգավիճակում. ԱՄՆ-ը քաղուած է Մերձատր Արեւելքում, ռազմական արշաւն Իրանի դէմ մտել է փակուղի, նրա զինանոցները դատարկուում են, իսկ դաշնակիցները (Մեքսիկոյն Արաբիա, Ճապոնիան) ապստամբում են: Մի Ծինփիւնը Թրամփին ուղղակի ասում է. «Միաբնու աշխարհն անարտուած է: Եթէ ուզում ես խուսափել աղէտալի պատերազմից (եւ Իրանում, եւ Գոլբալ Հարաւում), դու պէտք է համաձայնես կիսել համաշխարհային իշխանութիւնը մեզ հետ հաւասար հաւասարի պէս»: Փեքինը ԱՄՆ-ից պահանջում է ճանաչել բազմաբնուութիւնը որպէս կատարուած ֆիզիքական փաստ: Մրանից ենթադրելի է, որ տեղի է ունենալու ազդեցութեան գոտիների վերաբաժանում: Չինաստանը կ'երաշխարհի Հորմուզի մեղուցի կայունացումը՝ դրա դիմաց ստանալով անառարկելի առաջնորդութիւն Ասիայում (Թայլանդ) եւ տեխնոլոգիական սահմանափակումների չեղարկում: Եթէ ԱՄՆ-ը մերժի խաղաղ իշխանափոխանցման այս առաջարկը եւ փորձի պահպանել հեգեմոնիան, աշխարհը կարագացնի ընթացքը դէպի տնտեսական եւ ռազմական խմբաւորումների հիմնովին առանձնացում:

Այս ամէնը Հայաստանի համար կարող է նշանակել. ա) Հայաստանն իր արտաքին քաղաքական վեկտորը պէտք է յարմարեցնի նոր իրավիճակին, բ) Միաբնու պատրանքները վերջնական կը կործանուեն, քանզի Ուաշինկթընի միանձնեայ թելադրանքն անարտուած է: գ) Հայաստանը պէտք է անվտանգութիւն փնտռի միաժամանակ տարբեր բեռններում. օրինակ՝ Ուաշինկթըն, Փեքինի եւ Նիւ Տեյխի: Այսինքն, անցում դէպի Ասիա. Քանի որ տրնտեսական եւ ուժային ծանրութեան կեդրոնը տեղափոխուել է Արեւելք՝ Չինաստան եւ Հնդկաստան: Հետեւապէս մենք պէտք է Փեքինին առաջարկենք ոչ թէ դատարկ բարեկամութիւն, այլ «Մետաքսի ճանապարհի» (Միջին միջազանցքի) այլընտրանքային, անվտանգ լոգիստիկ հանգոյց՝ դառնալով նրանց գլոբալ առեւտրային շահերի անբաժանելի մասը Կովկասում: դ) Բոլոր դէպքերում Հայաստանի գերխնդիրն է պահպանել կոշտ չէզոքութիւն՝ թոյլ չտալով, որ մեր տարածքը վերածուի գերտէրութիւնների ռազմական կամ հետախուզական ասպարէզի (ինչպէս դա եղաւ Մերձատր Արեւելքում): Վերջապէս անկախ նախընտրական այս թոհուրոնից, հարկաւոր է խիստ զգօս լինել եւ ամէն միջոց ձեռնարկել մեր երկրի ու ժողովրդի վաղուայ լուսապայծառ օրը կերտելու համար:

Երեւան  
17.05.2026



Միութեան քաղաքական, ռազմաօդային եւ այլ երեւոյթների իրաւայացորդ Ռուսաստանի Դաշնութիւնը կարողացաւ յաղթահարել ֆինանսա-տնտեսական լրջագոյն դժուարութիւնները եւ թիւ երկու գերտէրութիւնը լինելու մասին յայտնութիւն յայտնեց: Յայտնելը-յայտնեց, բայց լսողների ու, առաւել՝ ընդունողների թիւը մեծ չեղաւ: Աւելին, դեռեւս Սառը պատերազմից մնացած ժառանգութեան ոգով, արեւմտեան մեծ թուով երկրներ սկսեցին ոչ միայն դրան լուրջ չվերաբերուել, այլեւ ծաւալուն աշխատանքներ ձեռնարկեցին Ռուսաստանին հետագայ թուլացնելու եւ լիովին մեկուսացնելու ուղղութեամբ:

Արդիւնքում Խորհրդային Միութեան նախկին մի քանի հանրապետութիւններում սկսուեցին ազգային արմատական հեղափոխումներ: Արտւում էր ամէն ինչ նրանց Ռուսաստանից ընդմիջու «պոկուելու» եւ նրա տնտեսա-քաղաքական ազդեցութիւնից ձեռքազատելու ուղղութեամբ: Մեծապետական շահերով առաջնորդող Ռուսաստանն էլ տնտեսական ու քաղաքական բոլոր լծակներով ու մեթոտներով հակադարձեց այդ ամէնին: Հետեւանքները եղան այդ երկրներում յաճախակի իշխանափոխութիւններն ու տնտեսական դժուարութիւնները: Այդ գործընթացները զնալով խորացան եւ ի վերջոյ՝ Ռուսաստանի դրդմամբ վերածուեցին նախկին Խորհրդային հանրապետութիւնների միջեւ անիմաստ ու կործանարար պատերազմների: Այդպիսիք էին միջինասիական հանրապետութիւնների միջեւ պարբերաբար բռնկուող եղբայրասպան բախումները: Այսպիսին էր նաեւ Հայ-ատրալէյճանական տեսակական պատերազմը, որը երկուստեք հազարաւոր անմեղ մարդկանց կեանքեր արժեցաւ:

Աւելին, այդ ամէնի տրամաբանական շարունակութիւնն է նաեւ ըստ էութեան 2014 թուականից շարունակուող ռուս-ուքրահնական անիմաստ, յիրաւի եղբայրասպան ու կործանարար պատերազմը: Արեւմուտքի երկրները բոլոր միջոցներով աստարում են Ուքրահնային, սակայն չնայած ԱՄՆ-ի նախագահ Թրամփի անպազորոտ ու յաւակնոտ յայտարարութիւններին, դրա վերջը դեռեւս չի էլ երեւում: Սակայն կարող ենք արձանագրել մի շատ կարեւոր իրողութիւն. Աշխարհի հզօրները շատ լաւ պատկերացում ունեն կատարող իրադարձութիւնների մասին եւ, կարծում ենք, որ Երկիր մոլորակը երկբնու յայտարարելու համար հիմք է եղել հէնց այդ իրադարձութիւններից խիստ թուլացած Ռուսաստանի գործօնն անտեսելու հնարաւորութիւնը: Ի հարկէ, Ռուսաստանը շարունակում է մնալ միջուկային գերտէրութիւն, տիեզերական եւ այլ նոր տեխնոլոգիաների տիրապետող, սակայն իր ամբողջ պաշարներով եւ հնարաւորութիւններով այն այլեւս ի վիճակի չէ մրցակցելու ոչ ԱՄՆ-ի եւ ոչ էլ Չինաստանի հետ: Ահա սա է այսօրուայ անհերքելի իրականութիւնը:

Իրականութիւն, որը մի քանի տարի առաջ անհաւանական էր թուում, սակայն այսօր կատարուած փաստ է այլեւս: Մեր աչքի առաջ կատարուեց մի բան, որ երբեւէ տեղի չէր ունեցել՝ աշխարհի ամենահզօր կապիտալիստական երկրի ղեկավարութիւնը, այդ թում տնտեսութեան ամենահարուստ օլիգարխները, գնացին սոցիալիստական Չինաստան խնդրագրերով: Սա միջազգային քաղաքականութեան մէջ արմատական փոփոխութիւն է, որ երբեւէ տեղի չէր ունեցել Խորհրդային Միութեան հետ, բայց հնարաւոր դարձաւ Պարսկաստանում ԱՄՆ-ի փաստացի պարտութեան պարագայում: Արձանագրել է պէտք, թէ ինչ է լինում, երբ ի սկզբանէ անհիմն, անտրամաբանական եւ հակամարդկային պատերազմն էս սկսում քո երկրից հազարաւոր քիլոմէթր էր հեռու՝ յոյսդ դնելով "առաջատր" տեխնոլոգիաներով համեմուած ռազմական գործողութիւնների վրայ:

Ապագայում պատմաբանները միգուցէ գնահատեն Պարսկաստանի վրայ ԱՄՆ յարձակումը որպէս Վերջին գաղութատիրական պատերազմ: Այլեւս հնարաւոր չէ փոքրաթիւ բայց տեխնոլոգիապէս առաջադէմ բանակով գալ, խլել, ջարդել, փշրել արեւել եւ տիրանալ տեղական պաշարների: Մի քանի դիտարկումներ եւս.

1. Չինաստանում պաշտօնական ընդունելութեան ժամանակ, որին ներկայ էին ԱՄՆ տնտեսութեան այնպիսի ղեկավարներ ինչպէս Թիմ Բուք (Apple), Լարի Ֆինք (BlackRock), Սթիւրն Ա. Շուարցման (Blackstone), Քելի Օրթոքրկ (Boeing), Պրայլըն Սայքս (Cargill), Ճաք Ռուպինկ (Cisco), Ճեյն Ֆրեյզըր (Ci-

Խմբագրութեան համակարգող՝	Գոկո. Արշալիր Կեօնճեան (Մոնթթեալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Հըրզի)
<b>Խմբագրական Կազմ</b>	
Յակոբ Անտիթեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուլթ)
Զաւէն Գրիգորեան	(Կթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
<b>Յաւցէ</b>	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A.	
Website: <a href="http://www.baikarweekly.com">www.baikarweekly.com</a> E-mail: <a href="mailto:baikarweekly@gmail.com">baikarweekly@gmail.com</a>	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

# ՎԱՆԸ ՄԻԱՅՆ ԱՆՑԵԱԼԻ ՆԵՐՈՍԱԿԱՆ ԷՋ ՄԸ ՉԷ, ԱՅԼ ԵՍԵՒ ԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՊԱՅՏԻԿ ԳԱԼԱՅՆՆԱՆ

Հայ ժողովուրդի նորագոյն պատմության ամենափառալուր եւ միեւնոյն ժամանակ ամենաճակատագրական էջերէն մէկը Վանի հերոսամարտն է, որուն յիշատակը հայրենիքը կ'ոգեկոչէ ազգային խոր հպարտութեամբ ու սրտի անանց յուզումով: Անկախ սոսկ ինքնապաշտպանութեան դէպք մը չէր, այլ՝ ազգային կամքի, ազատ ապրելու իրաւունքի եւ գոյատեւման աննկուն ձգտումի լուսաւոր խորհրդանիշ մը:



Վասպուրականը դարեր շարունակ եղած է քաջութեան, տոկունութեան եւ ստեղծագործ ոգիի երկիր: Իր աշխարհագրական դիրքին բերումով ան շարունակ գտնուած է օտար արշաւանքներու եւ անբնիկ պատերազմներու ճամբուն վրայ: Ասորեստանցիներ, մարեր, պարսիկներ, արաբական հորդանքներ ու մոնկոլական բանակներ բազմաթիւ անգամներ խուժած են այդ հիմնաւորը աշխարհը՝ կրակի ու սուրի մատնելով անոր շէն քաղաքներն ու խաղաղ գիւղերը: Սակայն Վասպուրականի հայրենիքը երբեք չէ ընկրկած: Երբ վտանգը մթազանց է հայրենի հորիզոնը, ժողովուրդը ապաստանած է լեռներու անմատչելի բարձունքներուն մէջ, պահած իր հաւատքն ու ոգին, ապա կրկին վերադարձած՝ վերաշինելու քանդուած տուները, վերամշակելու այրած արտերը եւ նոր շունչ տալու իր գեղածիծաղ հայրենիքին:

Այդ դարերով կոփուած ոգին իր ամենահզօր արտայայտութիւնը գտաւ 1915-ի գարնան: Երբ Վանի հայրենիքը կանգնեցաւ բնաջնջման մոռալ սպառնալիքին առջեւ, ան չընտրեց անձնատուութիւնը, այլ բարձրացուց դիմադրութեան դրօշ: Չէնքը վանեցիներու ձեռքին մէջ դարձան ոչ միայն ինքնապաշտպանութեան միջոց, այլեւ մարդկային արժանապատուութեան, ազգային պատիւի եւ ապրելու իրաւունքի սրբազան խորհրդանիշ: Այսպէս, Վանի հերոսամարտը վերածուեցաւ ամբողջ ժողովուրդի աննկուն կամքին ու վերապրելու վճռականութեան փառալուր մարմնացումին:

Վանի ինքնապաշտպանութիւնը դարձաւ ազգային գոյամարտի խորհրդանիշ մը, որ ոգեշնչեց յաջորդ սերունդները եւ սերմանեց ազատ ու անկախ հայրենիքի տեսլականը:

Վանի հերոսամարտէն մինչեւ անկախ Հայաստանի կերտումը, հայ ժողովուրդի պայքարը շարունակուեցաւ բազմաթիւ գոհողութիւններով ու փորձութիւններով: Սակայն այդ ամբողջ ճանապարհին անփոփոխ մնաց նոյն ոգին՝ ապրելու, ստեղծելու եւ անկախ պետականութիւն ունենալու կամքը: Վանի հերոսամարտը այդ իմաստով միայն անցեալի յիշատակ մը չէ, այլ նաեւ այն պատմական կամուրջը, որ հայ ժողովուրդը առաջնորդեց դէպի ազգային վերածնունդ եւ անկախ պետականութեան վերահաստատում:

Վեց դար շարունակ ապրելով թրքական տիրապետութեան ծանր լուծին տակ՝ Վասպուրականը կորսնցուցած էր իր քաղաքական անկախութիւնը, սակայն հայ ժողովուրդը պայքարած էր պահպանելու համար իր ազգային ինքնութիւնը: Հակառակ գոյութիւն ունեցող անարդարութիւններուն, բռնութիւններուն, սպանութիւններուն եւ շարունակական կողոպուտներուն, վասպուրականցիները կրցած էր գոյատեւման ուղիներ գտնել՝ իր լեզուով, մշակոյթով, արհեստներով եւ առեւտրով շարունակելով իր կեանքը ու ստեղծագործ աշխատանքը:

Ա. Համաշխարհային պատերազմի նախօրէին Թուրքիոյ մէջ իշխանութեան գլուխ անցած երիտթուրքերու ղեկավարութիւնը, օգտուելով պատերազմի ստեղծած պայմաններէն եւ միջազգային խառնաշփոթ իրավիճակէն, 1915-ի գարնան մշակեց եւ գործադրութեան դրաւ հայ ժողովուրդի բնաջնջման ծրագիրը: «Տեղահանութեան անհրաժեշտութիւն» պատրուակին տակ անոնք նպատակ ունէին զանգուածային կերպով արմատախիլ ընել պատմական Հայաստանի մէջ ապրող հայրենիքը եւ այս ձեռով վերջնականապէս փակել Հայկական Հարցը:

Իրիմեան Հայրիկի եւ Սկրտիչ Փորթուգալեանի վառած ազգային գիտակցութեան ջանքերը աստիճանաբար կ'արժարժէին ազատութեան եւ ինքնապաշտպանութեան գաղափարները: Վանի մէջ սկսած էր կրթական ու մշակութային վերազարթում մը: Բազմաթիւ կրթական օճախներ բացուած էին, որոնց շարքին՝ Երամեան, Ամերիկեան, Կեղորմական վարժարաններն ու Բարեգործականի վարժապետանոցը: Այս հաստատութիւնները դաստիարակեցին ազգային գիտակցութեամբ օժտուած, ազատատենչ երիտասարդ սերունդ մը, որ պատրաստ էր պաշտպանելու իր ժողովուրդին իրաւունքներն ու արժանապատուութիւնը: Այդ մթնոլորտին մէջ ծնունդ առաւ նաեւ Արմենական կուսակցութիւնը, որ իր առաքելութիւնը կը համարէր ազգային ազատագրութեան պայքարի կազմակերպումը:

Վանեցիներուն համար անձանօթ չէր օսմանեան իշխանութիւններու բռնապետական քաղաքականութիւնը: Արդէն 1896-ի մայիսեան օրերուն, Արմենական կուսակցութեան առաջնորդութեամբ, անոնք զինուած դիմադրութիւն կազմակերպած էին թուրք շարժարարներուն դէմ: Յունիսի 3-էն 8-ը շարու-

նակուած բախումները ստիպեցին թուրք իշխանութիւնները որոշ զիջումներ կատարելու: Սակայն կռիւներու ընթացքին բազմաթիւ կոտորածներ տեղի ունեցան, իսկ Վանի Այգեստանը (որ գերագանցապէս բաղկացած էր հայ բնակչութեամբ, ի բացառեալ անգլիական հիւպատոսարանէն ու Համուտ աղայի զօրանոցի պահպանութեան ջոկատներէն), պաշարուած ու թնդանօթներու հարուածներուն ենթարկուած, հերոսաբար դիմադրեց թրքական ուժերուն:

Վանի կուսակալը, մտավայտութիւն ունենալով ռուսական միջամտութենէն, անգլիական հիւպատոսին միջոցաւ խոստացաւ դադարեցնել կոտորածները, եթէ զինեալ խումբերն ու կուսակցական ղեկավարները հեռանային երկրէն: Սակայն այս առաջարկը հետագային բացայայտուեցաւ որպէս կանխամտածուած դաւադրութիւն:

Կուսակցապետերը, առաջնահերթ նկատելով Վասպուրականի հայ բնակչութեան ֆիզիքական անվտանգութիւնը, ընդունեցին առաջարկը: Անոնք քաշուեցան դէպի Վարազայ լեռը եւ անկէ տարբեր ճամբաներով ուղղուեցան դէպի Պարսկաստան: Սակայն ճամբաներու ընտրութեան շուրջ ծագած անհամաձայնութիւններուն պատճառով խումբերը բաժնուեցան, եւ Պարսկաստանի սահմանին մօտ թրքական զինուորական ուժերու ու քրտական աշիրեքներու կողմէ պաշարուեցան: Այդ դէպքերուն ընթացքին Վանի մօտ շուրջ ութ հարիւր երիտասարդներ, երեք առաջնորդներուն հետ միասին, կոտորուեցան՝ խոր սուգի մատնելով ամբողջ Վասպուրականը:

Արեւմտահայաստանի ամենահայաշատ անհանգնեղ մէկը՝ Սեբաստիայէն ետք, Վան-Վասպուրականն էր, որ կ'ապրէր մօտ 250,000 հայ բնակչութիւն: Օսմանեան իշխանութիւնները, յատկապէս Սուլթան Ապտիլ Համիտի քաղաքականութեան շարունակողները, Կովկասեան ռազմաճակատին վրայ իրենց կրած պարտութիւններուն պատասխանատու կը նկատէին հայերը: Այդ մթնոլորտին մէջ Վանի կուսակալ Ռեւտեք Պէյի տրուեցան խիստ հրահանգներ՝ «հաշիւները մաքրելու» Վասպուրականի հայութեան հետ, ինչ որ փաստօրէն նախերգանքը դարձաւ գանգուածային բռնութիւններուն եւ ցեղասպանական գործողութիւններուն:

Ռեւտեք Պէյ իր կարգին վանեցիներէն պահանջեց յանձնել 18-45 տարեկան բոլոր զինուորագրեալ հայ տղամարդիկը՝ իբրեւ զինուորական ծառայութեան ենթակայ անձեր: Սակայն հայ ժողովուրդը շատ լաւ գիտէր, թէ նման «զօրակոչերը» իրականութեան մէջ մահուան ճանապարհ էին, որովհետեւ նախորդ ամիսներուն բազմաթիւ հայ զինուորներ արդէն զինաթափուած ու սպանուած էին օսմանեան իշխանութիւններուն կողմէ:

Այդ ճակատագրական օրերուն ազգին պաշտպանութեան համար առաջ եկան ազգային գործիչներ եւ կազմակերպիչներ, որոնց շարքին էին Արամ Մանուկեան, Հայկակ Կոտայեան, Արմենակ Եկարեան, Պուկարացի Գրիգոր, Կայծակ Առաքել եւ ուրիշներ: Միասնականութեան դրօշի տակ անոնք կազմակերպեցին Վանի հերոսամարտը՝ ժողովուրդին ներշնչելով դիմադրութեան եւ գոյապայքարի ոգին:

Արիմարտի Ռեւտեք Պէյի շուրջ իրավիճակը օրեցօր անելի լարուած կը դառնար, եւ ան իր յատուկ խորամանկութեամբ կը փորձէր ծուղակի մէջ ձգել Արամ Մանուկեանն ու Օսմանեան խորհրդարանի հայ պատգամաւոր Արշակ Վռամեանը: Ան յաջողեցաւ ձեռքակալել Վռամեանը, որ հետագային խեղդամահ սպանուեցաւ Վանայ լիճին մէջ: Իսկ Արամ Մանուկեան պատահականօրէն խուսափեցաւ ձեռքակալութենէն եւ նշանակուեցաւ Վանի ինքնապաշտպանութեան քաղաքական մարմնի ղեկավար:

Ռամակալար գործիչ Արմենակ Եկարեանի հետ միասին ան ղեկավարեց Այգեստանի ժողովրդական դիմադրութիւնը: Սակայն Վանի ոճրագործ նահանգապետը վճռած էր ամէն գնով վերացնել հայ ղեկավարութիւնը, որպէսզի անելի դիմադրութեամբ կարողանար ոչնչացնել իր առջեւ գտնուող անպաշտպան ժողովուրդը:

Յաջորդող օրերը Վանի հայութեան համար անելի եւս ճակատագրական դարձան, յատկապէս երբ զիշեր մը հրկիզուեցաւ եւ գրաւուեցաւ անգլիական հիւպատոսարանը, ինչ որ խոր տագնապ ստեղծեց շրջակայ հայկական պաշտպանական դիրքերուն մէջ:

Հակառակ արձանագրուած կորուստներուն եւ աներուած դիրքերուն, իւրաքանչիւր դիրքապահ, հաւատարիմ իր ազգային ուխտին, չզիջեցաւ թշնամիին: Վարժապետանոցի աշակերտական նուագախումբը՝ Վանի «Ֆան-Ֆառը», դարձաւ դիմադրութեան խորհրդանշական ոգին: Կռիւներու ամբողջ ընթացքին ան կը շրջէր դիրքէ-դիրք, կը քաջալերէր մարտիկները եւ կը բարձրաձայնէր «Ամենայն տեղ մահը մի է» երգը՝ բարձրացնելով դիմադրողներու մարտական ոգին:

Աստիճանաբար հայ մարտիկները տարբեր մարտավարական միջոցներով սկսան քանդել եւ թուցնել հակառակորդին դիրքերը: Մէկ ամբողջ ամիս, զիշեր ու ցերեկ, Այգեստանը, Քաղաքամէջը, Շատախը եւ շրջակայ գաւառները դիմադրեցին թշնամիի յարձակումներուն, թնդանօթներու անընդհատ կրակին եւ ուժեղ ծուղակներուն:

Հայ ինքնապաշտպանութեան ղեկավար մարմինը այդ ամբողջ տեւողութեան կազմակերպում կերպով ղեկավարեց մարտական գործողութիւնները: Տկար դիրքերը զօրացուցին, կազմուեցան թռուցիկ խումբեր, մատակարարման մարմիններ, հիւանդանոցներ եւ դեղարաններ: Միաժամանակ ստեղծուեցան խրամներ փորող, դիրքեր վերակառուող եւ զինական արտադրութիւն սպահովող ստորաբաժանումներ: Ամբողջ բնակչութիւնը՝ ծերեր, կանայք եւ պատանիներ, ներգրաւուեցան ընդհանուր պայքարին մէջ՝ ցուցաբերելով քաջադիկ կազմակերպութիւններու եւ հերոսական ոգի:

Կռիւր տեւեց ամբողջ ամիս մը: 19 Մայիսին Վան մտան հայ կամաւորական խումբերը: Յաջորդ առաւօտ Վան հասաւ ռուսական զօրաբաժինը, մինչ թուրքեր փախուստի սկսան դիմել, ճամբուն վրայ կոտորելով շրջակայ գիւղերու հայ բնակիչները: Այսպիսով Վանը կ'ազատագրուի եւ հիմը կը դրուի ինքնավար Վասպուրականի վարչական կառուցման: Վանի ազատագրումը կը տեւէ 70 օր միայն, որովհետեւ ռուս բանակը նահանգի հրաման կը ստանայ,

(Ծար.ը տեսնել էջ 10)

# ԱՄՆ-Ի Վերադարձը Լիբանան.

## ԽԱՂԱՀՈՒԹԻՒՆ, ԹԵ ՆՈՐ ՀԱՒԱՍԱՐԱԿԵՌՈՒԹԻՒՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

### ՈՒՍՇԻՆԿԹԵՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՎՐԱՅ Է. ԻՆՉ ԵՆ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՍԱԳՕ ԱՐԵՄՆ

Խորքին մէջ ինչո՞ւ ամերիկացիք այսքան մօտեն հետաքրքրուած են Լիբանանի կարգավիճակով: Վերջին տարիներուն, եւ յատկապէս Ջօր. Փոզէֆ Աւունի ընտրութիւնէն ետք բացայայտ կերպով երեւելի դարձաւ, որ Միացեալ Նահանգներ կարեւոր ճիգեր կ'իրականացնէ, ոչ միայն երկրի նախագահին գործակից կանգնելու իմաստով, այլ նաեւ երկրին մէջ քաղաքական իր ազդեցութիւնը գործնական մօտեցումով:

Նկատած էինք անշուշտ, որ նախքան նախագահի ընտրութեան փուլը Սէուտական Արաբիան, որ Իրանի կողքին կը համարուէր «Լիբանանեան խաղ»ի հիմնական թելադրողներէն մին ձեռով մը հեռացաւ ընթացող գործընթացներէն: Այդ ի հարկէ ունի իր պատճառները, որոնց մասին կարելի է գրել այլ առթիւ:



Այդ «մասնակի» հեռացումը սակայն պատճառ հանդիսացաւ, որ Սատտ Հարիրիի (երբեմնի Սէուտցիներուն թիւ մէկ ներկայացուցիչը) հեռացումը կերպով մը ըլլայ «համակարգուած» Սէուտցիներու կեցուածքին հետ, որուն պատճառով ալ իրանցիներու ունեցած ներուժը աւելիով աճեցաւ...:

Այս կացութիւնը տեսց մինչեւ նոր նախագահի ընտրութեան փուլը, որմէ ետք, նոյնինքն լիբանանցիները զգացին, որ Միացեալ Նահանգներ Լիբանան «կը վերադառնայ» մեծ պատուհանէ մը, նպատակ ունենալով ստեղծել հաւասարակշռութիւններու կամ մրցակցութեան նոր փուլ մը:

Ու թերեւս այս պատուհանէն պէտք է դիտարկել բոլոր այն վարկածները, որոնք կապուած են լիբանանեան նոր իրավիճակին հետ: Այս փուլը Լիբանանի համար թերեւս վերջին փորձարկման փուլ մըն է, որովհետեւ նկատելի է, որ ԱՄՆ նախագահ Թրամփ կը փորձէ ամէն գնով յաջողութեան տանիլ Իսրայէլ-Լիբանան համաձայնութեան սեղան մը, որուն մասին անշուշտ իրենք՝ լիբանանցիք ունին շատ յաճախ չափազանցուած, շատ յաճախ ալ տեղին վերապահութիւններ:

Ի դէպ այս բոլորը դիտարկելէ ետք հարկ է անշուշտ հաշուի առնել այն բանակցութիւնները, որ տեղի կ'ունենան Ուաշինկթընի մէջ, որոնք ըստ երեւոյթին շարունակելի պիտի ըլլան: Այդ բանակցութիւններուն զուգահեռ նախագահ Թրամփ մի քանի «անսպասելի» յայտարարութիւններ կատարեց եւ խօսեցաւ Նաթանիահու-Աւուն հաւանական հանդիպման մը մասին, որմէ ետք թէ Լիբանանի նախագահը, թէ ալ Միացեալ Նահանգներ դէմ յանդիման եղան ծանր քննադատութիւններու եւ նոյնիսկ մեղադրական ոճի խօսքերու:



Թրամփի համար էական էր ու տակաւին էական է, որ իր նախագահական ցատաշրջանին յայտարարէ եւ նոյնիսկ յոխորտայ, թէ «տեսէք լուծեցի Իսրայէլ-Լիբանան հակամարտութիւնը, որ աւելի քան տարուան հակամարտութիւն մըն էր»: Անոր համար միւս քաղաքացիները, Իսրայէլի վարչապետը, Լիբանանի դէմ եղած գրոհները, կամ նոյնիսկ գոհերն ու վիրաւորեալները, տմանկ դարձած եւ գաղթականի վերածուածները հարց մը չեն...: Նոյն այս քաղաքականութիւնը կը շարունակուի այսօր ալ, սակայն այսօրուան կտրուածքով եւ շնորհիւ Լիբանանի նախագահի, վարչապետ Նաուաֆ Սալամի աչալուրջ մօտեցումներուն հնարաւոր եղաւ հրապարակ հանել նոր ձեւաչափ մը, որ կը խօսի «նախ խաղաղութիւն հաստատենք» դրուածքին մասին:

Այլ խօսքով կողմերը կը համաձայնին երկարատեւ հրադադարի մը շուրջ, անկէ ետք ալ ընթացք պէտք է առնէ իսրայէլեան ուժերու հեռացումը լիբանանեան հարաւի հողամասերէն:

Մնացեալը մանրամասնութիւններ են, որոնք պիտի իրականութիւն դառնան փուլ առ փուլ ու կարեւորագոյնը, ինչպէս վերը նշեցի Լիբանանի 8 առ հարիւրին վերադարձն է դէպի երկրի ծոցը եւ սիրտը: Այս ըսելով ինչ կրնանք հասկը-

նալ: Կրնանք հասկնալ, որ Իսրայէլ եւ Լիբանան ամբողջական խաղաղութեան չեն հասած սակայն կրակը դադարած է եւ Իսրայէլ հեռացած է Լիբանանի տարածքներէն: Բաց աստի պէտք է նաեւ դիտարկենք, որ այս ոճով մանաւանդ լիբանանցիք ու «Հըզպալլա»ի խօսքին ու ոճին դէմ եղող հանրոյթը հեռու պիտի մնայ նոր «արկածախնդրութիւններ»է, մանաւանդ որ Լիբանանի Շիխ համայնքը, եւ անոր շուրջ բոլորուած «ազդեցիկ» համարուող հատուածը Իսրայէլի հետ ցանկացած խաղաղութեան առաջարկ կամ «վաւերաթուղթ» կը համարէ դաւաճանութեան համագոր արարք:

Ու այս թելին վրայ հիմնուելով է, որ ԱՄՆ նախագահը եւ անոր վարչախումբը «կը մանէ» իր թելերը կապուած Իսրայէլ-Լիբանան թղթածրարին: Նախ հեռու մնալով վատ արձագանգ տուող հրահրումներէ (որոնք կրնան ըլլալ Լիբանանի ներսիդին) ու ապա ապահովելով «խաղաղաբեր» հրադադար մը, որ կրնայ դառնալ իրական հիմք գալիք զարգացումներուն:

### ԼԻԲԱՆԱՆԸ՝ ՆՈՐ ՄԵՐՉԱՄՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՉԱԶԱՐԸ

Բնականաբար Լիբանանի ժողովուրդի ջախջախիչ հատուածին համար պահանջուածը այն է, որ ուղղակի բանակցութիւններու ընթացքը հասնի լիարժէք խաղաղութեան համաձայնագրի մը, եւ ոչ թէ կիսատ լուծումներու կամ ժամանակաւոր պայմանաւորումներու: Կիսատ համաձայնութիւնները միայն կիսատ լուծումներ կը ծնին եւ ապագային նոր ցնցումներու դուռ կը բանան, որոնց բեռը լիբանանցիներն ալ կը կրնար կրել:

Սակայն այդ ճանապարհը լի է խոչընդոտներով, որոնցմէ գլխատորը այն աւանդական մտածողութիւնն է, որուն պատասխանատուները երկար տարիներ աշխատած են այդ «խօսք»ին վրայ: Մտածողութիւն մը, որ կը գերադասէ երկար վերլուծել եւ տեսաբանել՝ խուսափելու համար ճշմարտութիւնը ըսելէ եւ անհրաժեշտ քայլերը առնելէ: Միշտ ալ շրջանցումը անօգուտ եղած է, իսկ այսօր ժամանակն է իրականութիւնը բարձրաձայնելու, որքան ալ դժուար ըլլայ խօսիլ այդ իրականութեան մասին:

Լիբանանի պետութիւնը արդէն իր որոշումը տուած է եւ այլեւս չի կրնար երկակի չափանիշ որդեգրել՝ ո՛չ Իրանի եւ ո՛չ ալ Իսրայէլի նկատմամբ: Հետեւաբար պէտք է հրաժարիլ այն մտածումէն, թէ Լիբանանը պէտք է Իսրայէլի հետ խաղաղութիւն կնքող «վերջին երկիրը» ըլլայ:

Ինչո՞ւ Լիբանանը վերջինը ըլլայ, մինչ անիկա միակ արաբական երկիրն է, որուն Հարաւային ճակատը տակաւին կիզուած կը մնայ աւելի քան կէս դարէ ի վեր, այն պարագային երբ 1973 թուականէն աստիճան արաբական գրեթէ բոլոր ճակատները հանդարտեցան՝ Եգիպտոսէն մինչեւ Յորդանան եւ Սուրիա: Եթէ նոյնիսկ Իրանը ուղղակի բանակցութիւններ կը վարէ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն հետ, հակառակ անոր որ զայն գոյութեանական թշնամի կը նկատէ, ապա ինչո՞ւ Լիբանանի կողմէ Իսրայէլի հետ որեւէ բանակցութիւն «քաղաքական մտք» կը համարուի: Ինչո՞ւ կարելի է բանակցիլ «մեծ սատանային» հետ, բայց ոչ Իսրայէլի հետ, որուն կը կոչեն «փոքր սատանայ»:

Լիբանանը արժանի է խաղաղութեան համաձայնագրի մը, որպէսզի վերջ գտնէ հարաւային Լիբանանի շահագործման այն քաղաքականութիւնը, որուն նպատակը շատ յաճախ Պաղեստինի ազատագրումը չէր, այլ տարածաշրջանային վարչակարգերու շահերուն ծառայելը եւ անոնց ազդեցութիւնն ամրապնդելը: Խաղաղութիւնը նաեւ անհրաժեշտութիւն է, որովհետեւ Իսրայէլի հետ դիւանագիտական հաւասարակշռութիւն ստեղծելը հնարաւոր է, մինչդեռ զինուորական հաւասարակշռութիւնը պատրանք մըն է, եթէ Լիբանանը չունենայ հսկայական ռազմական պիտոճէ մը՝ տարեկան տասնեակ միլիառ տոլարներու չափով:

Տարիներէ ի վեր կը կրկնուի այն արդարացումը, թէ Ամերիկան չի զինել լիբանանեան բանակը, որպէսզի մեզի բոլորիս սիրելի այդ երկիրը մնայ թուլացած Իսրայէլի դիմաց: Բայց իրականութիւնը այն է, որ Միացեալ Նահանգները աւելի քան վաթսուն տարիէ ի վեր լիբանանեան բանակի հիմնական զինամթերքի աղբիւրն է: Հիմա հարց կը ծագի, ինչո՞ւ «դիմադրութեան առանցք»ի ուժերը, երբ տասնամեակներ շարունակ կը վերահսկէին լիբանանեան որոշումը, այլընտրանքային այնպիսի գէնք չհայթայթեցին, որ իսկապէս հաւասարակշռութիւն ստեղծէր Իսրայէլի հետ: Եւ ինչո՞ւ Սուրիոյ նախկին Ասատեան վարչակարգը վարչակարգը երբեք չբացաւ Կուրանի ճակատը՝ թեթեւեղութեամբ համար հարաւային Լիբանանի վրայ առկայ ճնշումը:

Հոգեբանական արգելք մը պէտք է փլուզուի, իսկ ինչ ու մաշած մտածելակերպ մը՝ բաղուի: Որովհետեւ խաղաղութեան այս առիթը կորսնցնելը կրնայ ոչ միայն կայունութիւնը վտանգել, այլ նաեւ լիբանանեան համակարգին գոյութիւնը ամբողջապէս իրար խառնել:

Աւանդական մտածողութիւնը միշտ ալ լիբանանցիները մղած է որոշումները ուշ առնելու եւ ամենաբարձր գինը վճարելու: Կարծես պետութիւնը սովորութիւն դարձուցած է միայն ուշացած որոշումներ առնելը եւ ապա ծանր հետեւանքներ կրելը: Իրականութիւնը այն է, որ երբ Լիբանանը իր ինքնիշխան որոշումը կը պահէր, հարաւի զիւղերէն ոչ մէկը բռնագրաւուած էր: Սակայն արտաքին «դիմադրութիւններու» բազմացումին հետ բազմացան նաեւ բռնագրաւումները եւ արտաքին միջամտութիւնները:

Այսօր Լիբանանը կը գտնուի ճակատագրական հանգրուանի մը առջեւ: Պետութիւնը միաժամանակ երկու ճակատի վրայ պայքար կը մղէ՝ ներքին ճակատի վրայ՝ իրանամէտ զինուած ուժերու հարցը լուծելու, եւ արտաքին ճակատի վրայ՝ իսրայէլեան բռնագրաւումը վերացնելու համար: Եւ այս երկու ճակատներուն մէջ ալ պետութիւնը ունի կարեւոր ուժեր, որոնց գլխատորը լիբանանցիներու մեծամասնութիւնն է, ինչպէս նաեւ արաբական ու միջազգային լայն շրջանակներու աջակցութիւնը:

Լիբանանի նախագահ Փոզէֆ Աւուն օրեր առաջ այս մօտեցումը յստակ կերպով արտայայտեց, երբ Երուսաղեմի Միութեան դեկլարներուն ոչ պաշտօնական հանդիպումին ընթացքին շեշտեց, թէ Լիբանանը ի վիճակի է «ճգնաժամի կտաւարում»-էն անցնելու «լուծումներ ստեղծելու» փուլին: Եւ սա ճիշդ գնահատական մըն է, որովհետեւ ամէն ճգնաժամ իր մէջ նաեւ փրկութեան պատմական առիթ մը կը կրէ... պայմանաւ որ լիբանանցիները այս անգամ չկորսնցնեն հորիզոնին վրայ երեւցող հնարաւորութիւնը:

Երեսան

Քաղաքական Հարթակ

# ԹՈՒՐԿԻԱ ԻՐ ԴԻՄԱԿԸ ՄԿՍԱԻ ՎԱՐ ԱՌՆԵԼ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Ք.Վ.

Վերջին ամիսներուն աշխարհի ակնառու կը դառնայ բախումի մը որ տեղի կ'ունենայ հին աշխարհակարգին ու նոր երեցող աշխարհակարգին միջև: ԱՄՆ եւ դաշնակիցներ կ'առաջնորդեն հին աշխարհակարգը, իսկ Չինաստան, Ռուսիա եւ ՊԻԻԷՍ տնտեսական համախմբումի այլ երկիրներ կը գտնուին նոր աշխարհակարգը հաստատելու ճգնաժամային փուլում: Բախումը տեղի կ'ունենայ մեկ աւելի մակարդակներու վրայ ու քանի մը ձեւերով: Ուրբանիա եւ Միջին Արեւելք կը մնան հիմնական վայրերը այդ բախումին նկատի առնելով որ անոնք կը գտնուին երկու բեռնակներու անդամ երկիրներու սահմաններուն վրայ: Տնտեսական, զինեալ եւ տեղեկատուական մարզերը հիմնական միջոցներն են այդ բախումին: Միջին Արեւելքի պարագային քարտէսի վերածելուն մը հոլովոյթը յստակ է: Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի միջեւ կնքուած Սայքս-Փիքո համաձայնագրի պարտադրած սահմաններու գծումէն անցած են 100 տարիներ: Ներկայիս ակնառու կը դառնանք տագնապի մը Պաղեստինի, Լիբանանի, Սուրիոյ եւ Միջին Արեւելքի շատ մը երկիրներու մէջ: Թուրքիա եղաւ օգտուող այս վերադասարարումի առիթն ու ներկայիս կը փորձէ քաղել այդ անկայունութեան պտուղները իր ներքին տագնապը լուծելու համար: Ան արագ շարժումով մը որու մանրամասնութիւնները տակաւին աղօտ են, իշխանութեան հասցոյց «Իսլամ եղբայրներ»ու շարժումին համակիր խումբ մը Սուրիոյ մէջ: Ներկայիս Սուրիան որ կը համարուի Միջին Արեւելքի ապահովութեան եւ կայունութեան հիմնական գործօնը մտաւ աննախատեսելի հոլովոյթի մը մէջ: Թուրքիա զինովցած է իր այս յաջողութենէն ու իրեն համակիր «Իսլամ եղբայրներ» շարժումը սկսած է աշխուժութեան նշաններ ցոյց տալ Եգիպտոսի, Յորդանանի ու Լիպիոյ մէջ: Ան կ'ուզէ վերականգնել իր Օսմանեան իշխանութեան օրերու սահմանները գոնէ քաղաքական եւ տնտեսական ազդեցութեամբ:

### Տնտեսական տագնապ

Թուրքիա ներկայիս կը դիմագրաւէ տնտեսական տագնապ եւ հարաւային սահմաններուն մօտ անկայուն վիճակ: Տնտեսական տագնապին հիմնական պատճառը բարձր սղանքն է (inflation): Երկար տարիներէ ի վեր Թուրքիա կը տառապի իր դրամանիշի՝ թրքական լիրայի փոխարժեքի անկումէն ամերիկեան եւ եւրոպական դրամանիշներու դիմաց: Ներկայիս թրքական լիրան հասած է մէկ Ա.Մ.Ն տոլարը 49 թրքական լիրայի սահմանին: Թուրքիան ըլլալով արտաձող երկիր, միշտ պահանջարկ ունի Ա.Մ.Ն. տոլարին հուն նիւթ ներածելու համար: Ներկայիս քարիւղի գինին բարձրացումը միջազգային շուկային վրայ յատկապէս ճնշում աւելցոյց Թուրքիոյ վրայ: Ան աւելի շատ Ա.Մ.Ն. տոլար պիտի վճարէ քարիւղի եւ բնական կազ ներածելու համար, նուազեցնելով այն գումարը որու միջոցով Կեդրոնական Դրամատունը կրնայ միջամտել թրքական լիրան պաշտպանելու համար: Արդիւնքը՝ բարձր սղանք եւ ընկերային անկայունութիւն: Այս վիճակէն դուրս ելլելու համար թրքական կառավարութիւնը կը փորձէ իր հարցերը լուծել արտաքին միջամտութիւններով եւ ընդարձակումով, օգտուելով Ռուսիոյ գաղութարարութենէն Ուրբանիոյ մէջ պատերազմին պատճառով: Իրան գրադած է Ա.Մ.Ն.- Իսրայէլ առանցքին դէմ իր մղած զինեալ, տեղեկատուական եւ «հիպրիտային» պատերազմով: Ուրեմն, Թուրքիա պիտի փորձէ օգտուիլ այս վիճակէն յառաջ մղելու համար իր նոր օսմանական քաղաքականութիւնը, որուն ողնայարն է քաղաքական եւ տնտեսական ազդեցութիւնը զօրացնել իր սահմաններէն դուրս՝ Յունաստանի, Ափրիկէի, հիւսիսային Միջին Արեւելքի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ:

### Տագնապ Յունաստանի հետ

Թուրքիա իր տնտեսական տագնապը մեղմելու համար կ'ուզէ շահագործել իր ծովային սահմաններուն մէջ գտնուող քարիւղի եւ բնական կազի հորերը: Մինչեւ հոս հարց չկայ: Սակայն, ծովային սահմաններուն մէջ միջազգային



գայնօրէն ճանչցուած Յունաստանի պատկանող ծովային պաշարներուն վրայ ձեռք դնելն է վտանգաւորը: Իսլամական Ատիայի տօնէն ետք Թուրքիոյ Խորհրդարանը պիտի քուէարկէ օրէնքի մը վրայ որ ձեռք պիտի դնէ միջազգային օրէնքով Յունաստանին պատկանող Եգէական Ծովուն մէջ

գտնուող կղզիներու վրայ: Թուրքիոյ ջրային տարածութիւնը պիտի հասնի 462 հազար քառակուսի քիլոմէթրի: Ըստ «Կապոյտ Հայրենիք» (Mavi Vatan) օրինագիծին, Թուրքիա ձեռք պիտի դնէ Սեւ Ծովի, Եգէական Ծովի յունական եւ Միջերկրական Ծովի յունական եւ կիպրական ծովային եւ ցամաքային տարածքներուն վրայ իր վտանգաւոր հետեւանքներով:

Որպէս պատասխան այս քայլին, Յունաստանի կառավարութիւնը պաշտօնապէս դիմեց Եւրոպական Միութեան որպէս անդամ երկիր, պահանջելով միջամտել եւ դադրեցնել թրքական բիրտ քաղաքականութիւնը, յիշեցնելով, որ Յունաստանի ծովային սահմանները Եւրոպայի սահմաններն են:

Թուրքիա իր տնտեսական տագնապը պիտի փորձէ լուծել իր դրացիներու հաշտոյն, որ տրամաբանական է նկատուի ունենալով Ա.Մ.Ն.-ի գրադած ըլլալը Իրանի հարցով: Թուրքիա հեռանալով Եւրոպայէն, դաշինք կը կնքէ Եգիպտոսի, Սէուտական Արաբիոյ եւ Փաքիստանի հետ: Ան իր գէնքերու արտադրութիւնը եւ դիւանագիտական ներուժը կը շահագործէ ճնշելու համար դրացիներուն՝ Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի վրայ:

Յունաստան շատ լաւ գիտնալով, որ առանձին պիտի մնայ թրքական որեւէ յարձակումի պարագային (քանի որ Հիւսիսային Ատլանտեան Ուխտը կամ Ն.Ա.Թ.Օ.-ն չի միջամտել երկու անդամներու պատերազմին), կը փորձէ համոզել Եւրոպական Միութիւնը միջամտելու այս տագնապին մէջ:

Օրէնքը ընդունուելու պարագային, ծովային բախումի մեծ հաւանականութիւն կայ: Թրքական ռազմաստերը պիտի մտնեն արեւելեան Եգէական Ծովի յունական կղզիներու շրջանը, Հռոդոս կղզին շուրջ եւ Կիպրոսի հիւսիսային շրջանը ու պիտի փորձեն իրենց հակակշիռը պարտադրել այդ շրջաններուն վրայ: Որեւէ կողմ չմիջամտելու պարագային, բախումը հաւանական է: Այս պարագային, Եւրոպական Միութիւնը պիտի մնայ դժուար որոշումի առջեւ: Եթէ պատժամիջոցներ պարտադրէ Թուրքիոյ նկատմամբ, այս վերջինը ապօրինի գաղութաններու հոսքին առջեւ պիտի բանայ Եւրոպայի դուռը: Երկրորդ ընտրանքը լուծ մնալն է եւ արժանանալը Յունաստանի եւ Կիպրոսի վարկաբեկումին իր ժխտական հետեւանքներով:

### Դէպի Կեդրոնական Ասիա

Դէպի արեւելք իր արշալիք մէջ, Թուրքիա կը շահագործէ իր ցեղային կապը Կեդրոնական Ասիոյ պետութիւններուն հետ իր հակակշիռը հաստատելու համար անոր վրայ անցնելով հարաւային Կովկասէն: Թուրքիա այդ շրջանի պետութիւններուն վրայ ունի բաւական մեծ ազդեցութիւն հակակշիռելու համար Ռուսական դաշնութեան, Իրանի, Չինաստանի եւ Արեւմուտքի ազդեցութիւնները:

Յարդ Կեդրոնական Ասիոյ հանրապետութիւնները վերապահ են թրքական քաղաքականութեան հանդէպ, որ իր խորքին մէջ կը կրէ շրջանի երեք ազդեցիկ պետութիւններու՝ Ռուսիոյ, Չինաստանին եւ Իրանին հակադրուող քաղաքականութիւն:

Արեւմուտքը կը քաջալերէ Թուրքիան վարելու համար Ռուսիոյ հակակշիռէն դուրս քաղաքականութիւն, որովհետեւ պէտք ունի Կեդրոնական Ասիոյ հսկայ բնական կազի պաշարին, Ռուսիոյ դէմ պատժամիջոցներու լոյսին տակ: Ուրեմն, Թուրքիա եւ հարաւային Կովկաս այն շրջաններն են ուրկէ պիտի անցնի դէպի Եւրոպա ուղղուող բնական կազը: Այս կէտէն դիտելու է Չանգեզուրի միջանցքին կարեւորութիւնը Ա.Մ.Ն.-ի եւ Եւրոպայի համար: Այդ անցքը պիտի կապէ Եւրոպան եւ Թուրքիան Կեդրոնական Ասիային: Չանգեզուրի անցքը պիտի շրջանցէ Ռուսիան եւ Իրանը ու պիտի աւելցնէ Թուրքիոյ ազդեցութիւնը հարաւային Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ: Թուրքիա պիտի կարենա՞յ աւելցնել իր հակակշիռը այս շրջանին մէջ առանց նեղացնելու Ռուսիան, Չինաստանը եւ Իրանը: Այս է հիմնական հարցումը:

### Քաղուելիք դասեր

Թուրքիա կորսնցնելէ ետք իր ամբողջական հակակշիռը Սուրիոյ եւ Լիպիոյ վրայ, ներկայիս կը փորձէ մտնել անցնել Կեդրոնական Ասիա Չանգեզուրի միջանցքը գործածելով որպէս անցք:

Չախողելէ ետք սիրաշահիլ արաբական լայն շրջանակներ շահագործելով Օսմանեան պետութեան իսլամական անցեալը եւ «Իսլամ եղբայրներ» կազմակերպութեան լծակները, ներկայիս Թուրքիա կը փորձէ դաշինք կնքել Եգիպտոսի, Սէուտական Արաբիոյ եւ Փաքիստանի հետ, կազմելու համար շրջանային իսլամական ապահովական կորիզ մը, ձեռք մը հակադրուելու համար շիա Իրանին:

Այս ծրագրին կը հակադրուի նաեւ Իսրայէլ ու ան ալ իր կարգին սկսաւ կազմել եռեակ դաշինք մը Յունաստանի եւ Կիպրոսի մասնակցութեամբ:

Թուրքիոյ ոչ յստակ դիրքորոշումը Իրանի հանդէպ կը բխի այն դերէն որ պիտի վստահուի Թուրքիային Իրանի տկարացումի պարագային հակակշիռ հաստատելու Կեդրոնական Ասիոյ եւ հարաւային Կովկասի մէջ:

Մեզի կը մնայ դաս քաղել Թուրքիոյ արտաքին բիրտ քաղաքականութենէն ու յոյս չդնել Արեւմուտքին վրայ որպէս պաշտպան: Եթէ այդ հսկայ ուժը չի կրնար օգնել իրեն անդամակցող Յունաստանին եւ Կիպրոսին, արդեօք պիտի օգնէ ամէն կողմէ պաշարուած փոքր Հայաստանին: Միայն մեր ուժն ու շրջանի հաւանական դաշնակիցներն են որոնք պիտի օգնեն մեզի դէմ դնելու այս բիրտ ուժին: Այս է դառն իրականութիւնը:

- Օգտագործուած աղբիւրներ՝  
 1. «Փակագիծ՝ Վերլուծական Հարթակ»  
 2. «Observer Research Foundation» կայքէջ




# ԼՐԱՔԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԱՐՅԱՆԻՑ



Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

## Հայաստանում աւելի քան 9000 մարդ տարրական կրթութիւն չունի

Հայաստանում 15 եւ բարձր տարիքի շուրջ 9 հազար մարդ՝ բնակչութեան 0,4 տոկոսը, կրթական որեւէ աստիճան չունի: Նրանց մօտ կէսը բնակուած է քաղաքներում: Ըստ Հայաստանի վիճակագրական կոմիտէի տուեալներին՝ ամենատարածուածը միջնակարգ կրթութիւնն է. այդպիսի կրթութիւն ունի աւելի քան 1 միլիոն 69 հազար քաղաքացի: Երկրորդ տեղում բարձրագոյն կրթութիւն ստացածներն են՝ աւելի քան 591 հազար մարդ, իսկ միջին մասնագիտական կրթութիւն ունի մօտ 452 հազար բնակիչ: Հիմնական կրթութեամբ քաղաքացիների թիւը կազմում է 162,562: Համեմատաբար քիչ են տարրական եւ տարրականից ցածր կրթութիւն ունեցողները՝ համապատասխանաբար մօտ 29 հազար եւ 9 հազար մարդ: Գիտական աստիճան ունեցողների թուաքանակը գրեթէ չի փոխուել. Հայաստանում կայ 3,035 գիտութեան թեկնածու եւ 3,073 գիտութեան դոկտոր: Ընդհանուր առմամբ յետրոսական կրթութիւն ունի 6,369 մարդ: Ընդհանուր պատկերով՝ Հայաստանում 15 եւ բարձր տարիքի բնակչութիւնը կազմում է 2 միլիոն 376 հազար 706 մարդ: Նրանցից շուրջ 1,54 միլիոնը քաղաքացի են, իսկ աւելի քան 836 հազարը՝ գիւղաբնակ:



լինել Աստուածաշնչում նկարագրուած տապանի հետ, որը, ըստ աւանդութեան, հազարատոմար տարիներ առաջ փրկել է մարդկութեանը եւ կենդանական աշխարհը համաշխարհային ջրհեղեղից:

Տարածքում ուսումնասիրութիւններ իրականացնող ամերիկացի հետազոտողների խումբը յայտարարել է, որ գետնի տակ յայտնաբերել է թունելների եւ խոռոչների հնարարու հետքեր: Հետազոտող Էնդրիու Չոնսի խօսքով՝ այդ «միջանցքները» միանում են աւելի մեծ կեդրոնական հատումով, որը յիշեցնում է ընդարձակ սրահ կամ ստրիտ: Նանշում է, որ այս կառուցուածքը որոշ չափով համընկնում է Աստուածաշնչեան նկարագրութիւնների հետ, որտեղ տապանը ներկայացուած է որպէս բազմաթիւ կառոյց՝ նախատեսուած Նոյի ընտանիքի եւ կենդանիների համար:



Հետազոտողների պնդմամբ՝ ստորգետնեայ դատարկ տարածքները դաստարտուած են որոշակի համակարգով եւ չեն յիշեցնում պատահական բնական խոռոչներ: Բացի այդ, ինֆրակարմիր թերմոգրաֆիայի միջոցով արձանագրուել են գետնի տակ թաքնուած հնարարու ձեւաւորումներ, որոնք որոշների կարծիքով կարող են նման լինել մեծ մասի կառուցուածքի:

Այնուամենայնիւ, գիտական հանրութեան մեծ մասը շարունակում է զգուշատր մօտեցում ցուցաբերել այս վարկածի նկատմամբ: Մինչ այժմ չկայ որեւէ վերջնական ապացոյց, որ Դուրուփինարի գոյացութիւնը իսկապէս Նոյեան տապանի մնացորդն է, եւ հիմնական գիտական շրջանակները այն դիտարկում են որպէս բնական երկրաբանական կազմաւորում:

## Հայաստանից առաջին անգամ միլիոնատոմար տոլարների հայկական գէնք է արտահանուել

Առաջին անգամ Հայաստանից միլիոնատոմար տոլարների հասնող հայկական արտադրութեան գէնք է արտահանուել: Այս մասին յայտնել է Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեանը.

«Վերջին ամիսներին տարբեր առիթներով, իմ տարբեր հրապարակային ելոյթներում, հարցազրոյցներում ասել եմ, որ մի քանի հայրենական արտադրողներ, հայկական ընկերութիւններ ստացել են գէնք արտահանելու թոյլտրութիւններ: Բաւականաչափ բարդ խնդիրների, լոգիստիկ դժուարութիւնների միջով անցնելով՝ հայկական ընկերութիւնները կարողացել են հասնել նպատակային կէտի: Հայկական ընկերութիւններն առաջին անգամ Հայաստանում մշակուած, Հայաստանում արտադրուած վերջնական արտադրանք կարողացել են հասցնել վերջնական օգտագործման երկրներ»,- նշել է նախարարը:

## Ատրպէյճանը Հայաստան է արտահանել 9,646,000 տոլարի ապրանքներ



Այս տարուայ յունուարից ապրիլ ընկած ժամանակահատուածում Ատրպէյճանը Հայաստան է արտահանել 9,646,000 տոլարի ապրանքներ, գրել են լրատուամիջոցները: Պետական մաքսային կոմիտէի վիճակագրութեան համաձայն՝ այս ցուցանիշը կազմել է Ատրպէյճանի արտահանման ընդհանուր ծաւալի 0.08%-ը: Այս տարուայ յունուարից ապրիլ ընկած ժամանակահատուածում Ատրպէյճանի արտաքին առեւտրաշրջանառութիւնը արտասահմանեան երկրների հետ կազմել է 17,403,345,140 տոլար:


## Ռուբեն Վարդանեանին առաջադրել են Վացլաւ Յաւելի անուան մարդու իրաւունքների 2026 թ. մրցանակի



Աշխարհի տարբեր երկրներից մի խումբ յայտնի իրաւապաշտպաններ Ռուբեն Վարդանեանին առաջադրել են Վացլաւ Յաւելի անուան մարդու իրաւունքների 2026 թ. մրցանակի: Առաջադրող խումբը հանդէս է եկել յայտարարութեամբ Ռուբեն Վարդանեանին Վացլաւ Յաւելի անուան մարդու իրաւունքների 2026 թ. մրցանակի առաջադրելու մասին. «Մենք՝ աշխարհի տարբեր երկրներում մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերով զբաղուող ներքստորագրեալներս, յայտարարում ենք, որ հայ մարդասէր Ռուբեն Վարդանեանին առաջադրել ենք Վացլաւ Յաւելի անուան մարդու իրաւունքների 2026 թ. մրցանակի: Այս առաջադրումը հիմք է ընդունում Ռուբենի նշանակալի ներդրումը մարդու իրաւունքների պաշտպանութեան գործում ամբողջ աշխարհում՝ «Արորա» մարդասիրական նախաձեռնութեան միջոցով, ինչպէս նաեւ նրա նուիրուածութիւնը՝ բարձրաձայնելու իր հայրենակիցների իրաւունքների պաշտպանութեան մասին Լեռնային Ղարաբաղում (Արցախում): Մենք խորապէս հուատացած ենք, որ Ռուբեն Վարդանեանն իրաւամբ արժանի է այս մրցանակին», - քաղուածք՝ յայտարարութիւնից:

Լրագաղը՝ ԼԻԼԻԹ ԼԱԼԱՅԵԱՆԻ, Երեւան

## Ատրպէյճանը հայկական ժառանգութեան խեղափրումը միջազգային հանրոյթին ներկայացնում է որպէս օրինական գործողութիւն



«Ատրպէյճանը հայկական ժառանգութեան խեղափրումը միջազգային հանրոյթին ներկայացնում է որպէս օրինական գործողութիւն»,- ահազանգում է Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը:

«Ատրպէյճանում հաւատարմագրուած դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչները՝ աւելի քան 150 դեսպաններ, դիւանագէտներ, ռազմական կցորդներ եւ այլ ներկայացուցիչներ՝ 62 երկրներից եւ միջազգային կազմակերպութիւններից մայիսի 2-ին այցելել են Արցախի տարբեր հայկական մշակութային վայրեր եւ քանգարաններ՝ ակնհաստես լինելով դրանց ատրպէյճանականացման ակտիւ գործընթացները: Մասնատրապէս պատուիրակները՝ Ատրպէյճանի նախագահի վարչակազմի արտաքին քաղաքականութեան հարցերով բաժնի ղեկավար Հիքմետ Հաջիեւի ուղեկցութեամբ այցելել են Շուշիի 19-րդ դարի Սուրբ Ամենափրկիչ Դազանչեցոց հայկական եկեղեցի, որը, 2020 թուականի պատերազմի օրերին՝ հոկտեմբերի 8-ին, Ատրպէյճանի կանխամտածուած կրկնակի ռմբակոծութիւնից յետոյ «վերականգնման» քօղի տակ ձեւախեղուել եւ խեղափրուել է՝ խախտելով կառոյցի պահպանութեան միջազգային նորմերը. մասնատրապէս՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմից սահմանուած մշակութային արժէքների պահպանութեան իսկութեան եւ ամբողջականութեան սկզբունքները: Ատրպէյճանական յայտնի լրատուական Report.az-ը նշում է, որ դիւանագէտները ծանօթացել են պատմամշակութային յուշարձանին, ինչպէս նաեւ՝ բազմակրօն ժառանգութեան պահպանման ուղղութեամբ Ատրպէյճանի գործադրած ջանքերին, որն իրականում ոչ թէ բազմակրօնութիւն է, այլ հայկական ինքնութեան ոչնչացում, տարածաշրջանից հայկական հետքերի մաքրում եւ հայկական գոյութեան ժխտում:

Նոյն օրը Հիքմետ Հաջիեւը սոցիալական ցանցերում տեսանիւթ է հրապարակել Շուշիի Դազանչեցոց եկեղեցուց: Հրապարակման մէջ մասնատրապէս նշում է, որ «Եկեղեցին վերականգնուել է՝ իր սկզբնական ճարտարապետական ոճին համապատասխան: Ատրպէյճանի Հանրապետութեան տարածքում գտնուող բոլոր օրինական շինութիւնները, ինչպէս նաեւ պատմական, մշակութային եւ կրօնական յուշարձանները պահպանում են, գտնում են պետական պաշտպանութեան ներքոյ եւ վերականգնում են ազգային օրէնսդրութեանը համապատասխան»:

## Արարատ լեռան վրայ յայտնաբերուել են Նոյեան տապանի նկարագրութեանը համապատասխանող փապուղիներ (թունելներ)

Արեւմտեան Հայաստանի՝ ներկայիս Թուրքիայի տարածքում գտնուող լեռնային հատումում կայ խորհրդատու երկրաբանական կազմաւորում, որը տարիներ շարունակ կապուած է Նոյեան տապանի լեգենդի հետ: Խօսքը Դուրուփինար գոյացութեան մասին է, որը գտնուած է Արարատ լեռան յարակից տարածքում: Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ այն կարող է կապուած

# ՄԵԾ ՎԱՐՊԵՏԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԱՂՄՈՒԿԸ ԼՌԵՑՆՈՂ ԱՐՈՒԵՍՏԸ

(Վահան Արծրունիի ծննդեան 60-ամեակին նուիրուած համերգ)

Պահեր կան, առիթներ կան, ձեռնարկներ կան, մանաւանդ՝ անհատներ կան, որոնք իրենց տաղանդով, պարզութեամբ, խոնարհութեամբ, բայց միաժամանակ նաեւ իրենց ճշմարիտ մեծութեամբ, մարդը կը կտրեն իր առօրեայի անվերջ վագրէն, մտահոգութիւններէն, դժուարութիւններէն ու ներքին ներդաշնակներէն: Կը կտրեն՝ զինք փոխադրելով ուրիշ աշխարհ մը, ուրիշ տարածութիւն մը, ուր հոգին կը սկսի շնչել այլ մթնոլորտի մը մէջ: Այդպիսի պահերուն մարդ կարծէք նախաճաշակ մը կ'ունենայ հանդերձեալ կեանքի երանական վիճակէն: Զգացումները, որոնք առաջին պահուն թերեւ զգացական կամ պարզ ապրումներ թուին, կամաց-կամաց կը բարձրանան զգայարաններու սահմաններէն անդին եւ կը ճախրեն դէպի վերացականը, դէպի հոգեւորը, դէպի այն լռակեաց խորութիւնը, ուր մարդը ինքզինք ատելի մաքուր ու ատելի ճշմարիտ կը զգայ:



Քիչ առաջ այդ առիթներէն մէկուն ներկայ գտնուեցայ՝ երաժիշտ Վահան Արծրունիի ծննդեան 60-ամեակին նուիրուած համերգային երեկոյին: Համերգը պարզապէս յորեմնական ձեռնարկ մը չէր, ոչ ալ միայն երաժշտական ներկայացում մը, այլ՝ հոգեւոր փորձառութիւն մըն էր, ներքին արթնութեան պահ մը, որ մարդուն կը յիշեցնէ, թէ ինք լոկ մարմինէ ու միտքական պահանջներէ բաղկացած արարած մը չէ, այլ առաջին հերթին՝ հոգեւոր գոյութիւն մըն է:

Արդարեւ, մարդ արարածը ֆիզիքական գոյութիւն մը ըլլալէ շատ ատելի է: Մարմինը տեսանելի է, շօշափելի, ժամանակատու, մինչ հոգին անտեսանելի, բայց իրական ներկայութիւն մըն է, որ իմաստ ու ուղղութիւն կու տայ մարդկային կեանքին: Նախքան մարմինի ամբողջական կազմաւորումը՝ հոգին է, որ կը նախորդէ որպէս աստուածատուր շունչ եւ պատճառ կը հանդիսանայ մարմինի գոյութեան ու աստիճանատուր կազմաւորման: Այդ պատճառով ալ մարդ չի՛ կրնար միայն մարմինին հոգ տանիլ եւ մոռնալ իր ներաշխարհը: Ան կոչուած է խնամելու իր հոգին, զայն ազնուացնելու, մաքրելու, գեղեցկացնելու եւ կատարելութեան առաջնորդելու, որպէսզի օր մը կարենայ դէմ յանդիման կանգնիլ զինք արարող ու գոյութեան կոչող Արարիչ Աստուծոյ:

Այս իմաստով, Վահան Արծրունիի 60-ամեակին նուիրուած համերգը պարզ արուեստագիտական իրադարձութիւն մը ըլլալէ անդին ու ատելին, մարդուն մէջ այդ գիտակցութիւնը արթնցնող խթաններէն մին էր, որով մարդ մուտք կը գործէ իր ներաշխարհէն ներս՝ կարուելով առօրեայ աղմուկէն եւ առիթ կ'ունենայ ինքն իր հետ ըլլալու:

Արուեստը, արդարեւ, երբեմն կը զուարճացնէ, երբեմն՝ կը հիացնէ, երբեմն՝ ժամանակատուր հաճոյք եւ ներքին բաւարարութիւն կը պատճառէ, բայց շատ հազուադէպ պարագաներու ան կը սրբագործէ մարդուն ներաշխարհը: Այս համերգը այդ հազուագիտ փորձառութիւններէն մէկն էր: Երաժշտութեան հնչիւնները կարծէք չէին ուղղուէր միայն ականջին, այլ՝ ուղիղ կերպով կը թակէին հոգիին դռները (յատկապէս «Ես եմ»ը, հեղինակ՝ Կոմիտաս վարդապետ, երաժիշտ. Վահան Արծրունի, կատարումը համերգի ժամանակ Վահան Արծրունի եւ Աննա Մայիլեան): Ամէն մեղեդի իր մէջ կը կրէր ներքին խոստովանութեան հրաւիր մը, ինքնաքննութեան կանչ մը, լուռ աղօթքի անմտող հոգեկան շարժում մը:

Վահան Արծրունիի արուեստին մէջ կայ հազուագիտ յատկութիւն մը. ան չի փորձեր աղմուկով գերել ունկնդիրը, այլ՝ ներքին լռութեան միջոցով: Ճիշդ է, որ Արծրունիի երաժշտութիւնը նաեւ նորարարական է (progressive music), սակայն, անոր հմտութիւնը եւ վարպետութիւնը իր մշակումներուն եւ յառաջ բերած երաժշտութեան մարդս կը մղէ պահ մը դադրիլ լսել արտաքին աշխարհի ժխորը, հեռանալ առօրեայի մեքենայական ընթացքէն եւ մուտք գործել իր սեփական ներաշխարհը՝ փորձելով բարձրանալ դէպի վեր...: Իսկ այդ ներաշխարհին եւ դէպի վեր բարձրանալու փորձին մէջ մարդ յաճախ կը հանդիպի զինք յուզող ամէնէն անկեղծ հարցումներուն. ո՞վ եմ ես, ո՞ր կը գտնուիմ, դէպի ո՞ր կ'երթամ, ի՞նչ իմաստ ունի կեանքս եւ վերջապէս՝ որո՞ւ մօտ կ'երթամ:

Այս հարցումները մարդկային կեանքի ամէնէն խոր եւ ամէնէն անհրաժեշտ հարցումներն են, սակայն, ժամանակակից մարդը շատ յաճախ կը փախչի այս հարցումներէն: Առօրեան, շտապողականութիւնը, միտքական հոգերը եւ արտաքին աշխարհի աղմուկը մարդուն չեն արտօնէր լսել իր հոգիին ձայնը: Այդ պատճառով ալ, երբ արուեստագէտ մը կ'ունենայ այն կարողութիւնն ու հմտութիւնը՝ որով կը կարենայ մարդը վերադարձնել իր ներաշխարհին, ապա այդ արուեստը արդէն կը դադրի սովորական արուեստ մը ըլլալէ եւ կը վերածուի հոգեւոր առաքելութեան:

Թերեւս ասիկա է պատճառը, որ նման երեկոյներուն մարդ դաժիմէն դուրս կու գայ ոչ միայն գեղարուեստական հաճոյք ստացած, այլ՝ ներքուստ փոխաւած, մեղմացած եւ մաքրուած՝ բիրտեղացած: Կը զգայ, թէ իր մէջ բան մը արթնցած է, բան մը՝ որ առօրեայի ընթացքին թմրած էր: Կը զգայ, թէ տակաւին կարելի է գեղեցկութեան միջոցով մօտենալ ճշմարտութեան, իսկ ճշմարտութեան միջոցով՝ Աստուծոյ:

Այսօր, երբ աշխարհը ատելի քան երբեք կը տառապի ներքին դատարկութեան, հոգեւոր սով է մարդուն ինքնութեան կորուստէն, Վահան Արծրունի եւ իր նման արուեստագէտներու ներկայութիւնը իսկական օրհնութիւն մըն է: Անոնք

## ՎԱՐՄԵՂ ԶՈՐԹՍՈՍՆԱԿ

մեզի կը յիշեցնեն, թէ մարդը մեքենայ չէ, ոչ ալ պարզ սպառող գոյութիւն մը: Մարդը հոգի ունի եւ այդ հոգին գեղեցկութեան, լոյսի, ճշմարտութեան ու Աստուծոյ ծարաւը ունի: Իսկ ճշմարիտ արուեստը, երբ ծնած է մաքուր հոգիէ եւ անկեղծ ներաշխարհէ, կրնայ այդ ծարաւին դարձան դառնալ:

Այս բոլորէն մեկնելով, Վահան Արծրունիի 60-ամեակին նուիրուած համերգային ծրագիրը լոկ համերգ մը չէր, այլ՝ ներքին ճամբորդութիւն մը, հոգեւոր վերելքի պահ մը եւ լուռ յիշեցում, թէ մարդը որքան ալ կապուած ըլլայ այս աշխարհին, իր հոգին միշտ դէպի վեր կը նայի: Պէտք է նշել նաեւ, որ եթէ Վահան Արծրունին այս բոլորին կողքը չըլլայ, չի՛ կրնար այսքան ներուժ փոխանցել իր



հանդիսատեսին: Ան իր արուեստով ու մարդկային պարզութեամբ կը վկայէ, թէ ինք կրողն է բոլոր այս արժեքներուն, ինք փորձած է իր արուեստով գտնել մարդս յուզող հարցումներուն պատասխանները:

Օրեր առաջ (հինգշաբթի, 7 մայիս 2026) թերթիս մէջ ստորագրած էինք՝ «Մեր օրերու խոնարհ հերոսը» յօդուածը, որ նուիրուած էր Վահան Արծրունիին: Այդ գրութիւնն ու վերագրեալ տողերը կարդալէն ետք ընթերցողը պիտի գիտակցի, թէ ի՞նչ մեծ վարպետի մը, թէ ի՞նչ խոր ունեցող արուեստագէտի մը եւ ի՞նչ ՄԵԾ ՄԱՐԴ-ու մը ժամանակակիցն է ինք:



Վահան Արծրունիի ստեղծագործ հոգին տակաւին երկար տարիներ թող շարունակէ ծնունդ տալ այնպիսի արուեստի, որ ոչ միայն ունկնդիրին ականջին հաճելի թուի, այլ՝ հոգիին հալի: Թող անոր երաժշտութիւնը մնայ ներքին լոյսի աղբիւր՝ յոգնած ու աղմկալի այս ժամանակներուն մէջ մարդը դէպի գեղեցկութիւն, ազնութիւն եւ հոգեւոր խորութիւն առաջնորդող: Եւ թող Ամենաբարին Աստուած անոր շնորհէ առողջութիւն, կորով ու անսպառ ներշնչում, որպէսզի շարունակէ իր ներկայութեամբ ու արուեստով լուսաւորել մեր մշակութային երկնակամարը եւ նոր սերունդներու հոգիներուն մէջ արթնցնէ ճշմարիտ արուեստին հանդէպ սէրն ու հոգեւոր զգօնութիւնը:

**Յ.Գ.** Երբ տուն կը վերադառնայի գաղափարս այն էր, որ համերգին նկարագրութիւնը ընէի, բայց Վահան Արծրունիի փոխանցած ներուժը, ապրումներն ու յոյզերը ամբողջութեամբ ուրիշ աշխարհ տարին զիս... Առ այդ, որպէսզի համերգին մասնակից արուեստագէտներուն հանդէպ մեղապարտ չգտնուիմ, այստեղ կը նշեմ այն բոլոր արժանատուր ու տաղանդատուր արուեստագէտները, որոնք իրենց մասնակցութիւնը բերին Վահան Արծրունիի 60-ամեակին նուիրուած համերգային ծրագիրին:

Աննա Մայիլեան, Հայաստանի Հանրապետութեան վաստակատու արուեստագէտ, Նելլի Քալաշեան, Ժաննա Դաւթեան եւ Անայիս Արծրունի (Վահան Արծրունիի դուստրը, առաջին բեմ բարձրանալը... այնքա՛ն քաղցր կատարումով) մեներգ: Դաւիթ Մերձմետեան՝ սաքսոֆոն: Նորայր Քարտաշեան՝ փողային գործիքներ: Գրիգոր Քարտաշեան՝ զուռնա: Գրիգոր Դաւթեան՝ դիոլ: Նելլի Մանուկեան՝ ֆլէյտա: Մատաթ Աւանետով՝ ստեղնաշարային գործիքներ: Վահագն Ամիրխանեան՝ սոլո կիթառ: Արթուր Մոլիսովիչ՝ պաս կիթառ: Լեւոն Հայկերտեան՝ հարուածային գործիքներ: Համերգին նաեւ իր մասնակցութիւնը բերաւ «Ալեքսանդր Սպենդիարեան» օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նուագախումբը՝ ղեկավարութեամբ Յարութիւն Արզումանեանի:

11-12 մայիս 2026, Վաղարշապատ  
"Ժամանակ" օրաթերթ, Պոլիս

Հի ն եւ մոռցուած դէմքեր, դէպքեր, անուններ...


«ՏԱՐՕՆԻ ՏԱՏՐԱԿ»-Ը ԻՐ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՈՎ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

Այժմ հակինք Մշոյ Գեղամին կամ «Տարօնի Տատրակ»-ին գրական բերքին վրայ ու առիկա քննենք, պեղենք աւելի՛ մօտէն:

Գեղամ գիր-գրականութեանը զբաղած է առնուազն 25 տարի, 1880-ականներու վերջերէն մինչեւ 1915: Ըստած է տեղ մը դիպուկ կերպով, թէ ան ցերեկները կ'աշխատէր իբրեւ Գեղամ (գրականութեան սպասաւոր), զիշերները՝ իբրեւ Տատրակ եւ Աստղիկ (հանրային-յեղափոխական գործիչ):...



"Տարօնի Տատրակը" Գեղամ Տէր Կարապետեան

Գեղամ Տէր Կարապետեանի բոլոր պատմութիւնները, հեքիաթները, տպաւորապաշտ էջերը առատօրէն ցրուած մնացին ժամանակաշրջանի պոլսական մամուլի էջերուն («Հայրենիք», «Արեւելք», «Մասիս», «Բիւզանդիոն», «Բիւրակն», «Սուրհանդակ», «Ազատամարտ» եւ այլն), մինչեւ 1931-ի այն երջանիկ օրը (մահէն 13 տարի ետք), երբ Փարիզի մէջ հրատարակուեցաւ իր գործերուն առաջին ժողովածուն՝ «Տարօնի աշխարհ»-ը: Այս ծաւալուն հատորին (340 էջ) վերնագիրը ինքզինք կը մատնէր արդէն: Չայն թերթատողը անմիջապէս պիտի նկատէր, որ Գեղամի գրականութեան առանցքը Տուրքերանն էր՝ իր Մուշով, Պիթիսով, Մասունով, Խնուսով, Պուլանըխով, Վարդոսով եւ ասոնց շրջակայքով: Ուրիշ աշխարհ չէր ճանչցած հեղինակը: Թերեւս ցցուն գեղարուեստականութիւն մը չունէր իր գրականութիւնը, բայց գանձարան մըն էր անիկա ազգագրութեան, տեղագրութեան, գեղջկական բառերու եւ բարբերու, գաւառային տիպարներու (զգիր, քահանայ, վանական, հօտաղ, գիւղապետ, լարախաղաց, պանդուխտ եւ այլն, եւ այլն): Գեղամ շունչ տուած էր իր բնօրրանին սարերուն, քարերուն, սրբատեղիներուն, բնութեան, ականջը միշտ լայն բացած Մ. Կարապետի կոչնակներուն յալիտեանական դողանջին:...

Ի վեր հանած էր գաւառացիին կարօտները, անդարմանելի վերքերը, անպիտփելի վիշտերը, նախապաշարումները: Տեղ մը անդրագրած էր «Լուսնակ գիշերով ուղեւորութիւն մը ի Մուշ», տեղ մը խօսած էր հովիւ Կարոյի, Սարգիս աղբարի, այրի Ասիկի ու այլոց մասին, վերապատմած էր «Կաթն-աղբիւր եւ Մասնաղբիւր»-ի ասանդակները, ի վերջոյ կատարելու համար «Այց մը քրքաց վրաններուն»:... Իսկական տատրակի մը պէտք ան թոյած էր հովիտ-հովիտ, գիւղ-գիւղ եւ վանք-վանք, թառած էր կտորներուն եւ գմբէթներուն վրայ, կոցահարած էր դաշտի ծաղիկները ու սլացած վե՛ր՝ շիտ մը բռնած կտուցին մէջ:...

Առ այդ, կրնանք անվարան քսել, որ Տարօնի գիւղացիութեան կեանքը գեղարուեստական գրականութեան բերող գլխաւոր արձակագիրը Գեղամն է: Իրեն կը հետեւի, շատ աւելի համեստ չափով, մշեցի վաղամեծիկ արձակագիր Գալուստ Անդրեասեանը (1869-1906):

Հետեւաբար, սխալ չէր, երբ իր անունը ի սկզբանէ դրինք Թլկատինցիի անունին կողքին՝ իբրեւ գաւառիկ գրականութեան ներկայացուցիչ: Եթէ Թլկատինցին Խարբերող ու անոր գեղջուկ տարրը վերապրեցուց իր էջերուն մէջ, ապա Գեղամն ալ Տարօնն ու անոր գիւղացիութիւնը վերապրեց իր էջերուն, տրուած ըլլալով որ ան սերտօրէն առնչուած էր Մասնոյ, Մուշի եւ շրջակայից առօրեայ կեանքին, կենցաղին ու անցուդարձերուն: Ան իր ձեռքին հինգ մատներուն մնան լա՛ւ կը ճանչնար Տարօնը ու անոր տառապանքները:... Եթէ Խարբերողը, աշխարհագրականօրէն, նկատենք Պոլսոյ ու բուն Հայաստանի միջեւ գտնուող «միջանկեալ շրջան» մը, ապա Տերսիմէն ու Տարոսեան լեռնաշղթայէն անդին՝ Հայաստանի կոյս միջավայրին մէջ գաւառիկ գրականութեան միակ ներկայացուցիչը Մշոյ Գեղամն էր, Խրիմեանի ու Սրուանձտեանցի աւելի կանուխ ժամանակներէն ետք: Կարօ Մասունի այս առնչութեամբ կը հաստատէ. «Այս դասաւորութեամբ, Գեղամի ձայնը սրտառու է հայ գրականութեան համերգին մէջ, իր ինքնայատուկ երանգներով: Այդ բեմին վրայ՝ Գեղամ առանձին աթոռի մը վրայ կը նստի, Հայաստանի տարագրվը զգեստաւորուած» («Հայրենիք» ամսագիր, 1931):

Ֆրանսահայ երգիծարան Նշան Պէշկեպաշլեան, առիթով մը, Գեղամի մասին կատարել էր հետեւեալ հաստատումը.

-- Որքան իրաւամբ կոչուած է «Մշոյ Տատրակ»: Աղանքի վուվուներ են իր գրութիւնները, համակ խանդ ու խռովք, հառաչ ու յուզում, կաթիլ-կաթիլ արին ու արցունք, եւ ցաւագին, ցաւագին. մեծ ողբերգութեան մը իբրեւ մանրանկար մեներգեր, որոնք մեր հոգին կը լեցնեն հաղորդական կոհակներով կսկիծի:

Իր գրականութիւնը այնքան մնան է իր դէմքին ու անոր արտայայտութեան.-- գաւառական, հայադրոշմ, վշտոտ, ազնիւ, մաքուր, առաքինի, տառապակոծ, հայրենի հողու հասկ, հայրենի հող ու ջուր, հայրենի հոգի («Լուսաբերդ», Փարիզ, 1956):

Իսկ գրականագետ Մինաս Թօլէօլեան իր «Կար մը գրականութիւն» (Պոսթըն, 1977) երկհատոր աշխատասիրութեան մէջ Մշոյ Գեղամին մասին կը գրէ.

-- Հայութիւնը, Գեղամի մէջ, կրօն մըն է: Թլկատինցին, Հրանդ եւ Չարդարեան, ինչպէս հողէն եւ գիւղէն եկող մեր բոլոր գրողները, Գեղամով աւելի շունչ մը կը բերեն գաւառիկ մեր գրականութեան,-- ցայտուն կերպով յեղափոխական շունչ մը, որ չի կայանար բառին ընթացիկ իմաստը իրագործելու ձգտումի մը մէջ: Այդ «յեղափոխականութիւն»-ը ոգիով մը կայ անոր բոլոր պատումներուն, խորհրդածական էջերուն, կամ մեր կեանքէն պատկերներու սեւեռումին մէջ: Ամէն մէկ բառը հող է, լեռ է, Տարօն է,-- բոլոր այս բառերուն հայեցի տարողութեամբը: Կը զգաս, որ գրեթէ լեռնական մարդու մը ազգային մոլեգնութիւնը կայ իր էջերուն մէջ:

Պետք է ընդունիլ սակայն, որ Գեղամ սկիզբէն իվեր քիչ կարդացուած կամ թերագնահատուած գրող մը եղաւ: Ատոր ալ գլխատր պատճառը իր լեզուն էր, լի՛ Մշոյ գաւառաբարբառի ճնշիչ բառամթերքով կամ աստիճաններով: Խարբերողի Թլկատինցիի պարագան ալ նոյն էր: Գաւառիկ գրականութեան մեր այս երկու սիրելի դէմքերը եթէ գաւառաբարբառը միմիայն իրենց հերոսներուն երկխօսութեան ատեն օգտագործէին,-- ինչպէս վարպետօրէն ըրած է Համաստեղ,-- ու իրենց գրութեանց պատմողական կամ նկարագրական բաժինները գերծ պահէին բարբառներու տիրապետութենէն, այն ատեն, կը խորհինք, իրենց այդ էջերը ընթերցողներու աւելի լայն շրջանակ մը պիտի գտնէին անկասկած:

Տա՛նք բարացուցական օրինակ մը:

Միտքարեան միաբաններէն Հ. Մետրոպ Դանաշեան իր «Ծաղկաքաղ արդի հայ գրականութեան» դասագրքին Բ. հատորին մէջ (Վենետիկ, 1963) տեղ տուած է Մշոյ Գեղամին՝ անկէ ջոկուած հեքիաթով մը, որ կը կոչուի «Տնանկ Մարտօն»: Ահա՛ այդ հեքիաթին մուտքը.

-- Թաշկուկ արեւը սեւ սարու գլխէն անցեր ու հանգչեր էր, ու պրակ մամպեր երկնուց երես՝ զինքը քօռքը էին: Մեպտեմբերն ալ կծիկ դրած, առած քալած էր, երբոր Մարտօն կորեկի յետին փունջը ձեռքը իր կալը կը վերադառնար: Հոն կային իր երկու նիհար ու դաժ եզները, կինն ու տղեկը:

Գատուկ, քրտնուկ՝ նա նստաւ իր ծղօնէ հոլիքին ներքերը, թիւթի մտրիկէն խայրոցով լեցնելով՝ սկսեց քքնել: Մթոնկ ու արտում էր:



Ակնբախ են գաւառային բառերը (գորս ընդգծեցինք)՝ մէջբերուած այս կարճ հատումին 4-5 տողերուն վրայ իսկ: Թէեւ Դանաշեան վարդապետ ճգնած է տողատակի բառացանկով մը բացատրել ու պարզել բազմաթիւ անմանօք բառեր, այնուամենայնիւ՝ գրութեան ընթերցումը կը շարունակէ կաղալ՝ անհասկնալի աստիճաններու առատութեան դիմաց:...

Հարկ է մոռացութեան չտալ պարագայ մը եւս. գաւառ ապրող մեր գրագէտները, իրենց աշխարհագրական դիրքին բերումով, ընդհանրապէս զրկուած էին գրագէտ բարեկամներու կամ գրչեղբայրներու հետ անմիջական շփումներէ, գրական օգտաշահ բանավեճերէ ու գրական խթանիչ մրցանոյրտէ, ի տարբերութիւն Պոլսոյ, որ բախտաւոր էր այդ տեսակէտէ: Այս ալ յատկապէս պատճառ մըն էր, որ գաւառացիք մնային լուսանցքի վրայ:...

Կարօ Մասունի, «Հայրենիք» ամսագրի 1931-ի իր վերոնշեալ յօդուածին մէջ ընդլզում կ'արտայայտէր որ «հայ գրականութեան բեմին վրայ Գեղամի երեւնալէն մինչեւ այսօր, քառասուն եւ հինգ տարուան ընթացքին, ո՛չ մէկ գնահատական կամ քննադատական ուսումնասիրութիւն, նոյնիսկ ո՛չ մէկ հասարակ յօդուած նուիրուած է անոր կեանքին եւ գրականութեան»: Թերեւս:

Ուրախալի է սակայն, որ Մշոյ Գեղամին գրականութեան նկատմամբ, 1960-ականներու վերջերէն սկսեալ, լո՛յս մը ծագեցաւ Խորհ. Հայաստանի մէջ: Մասնով երեւցած քանի մը համեստ արձագանգներ անկախ, մշեցի ընտանիքի մը շառափողը՝ գրականագէտ ու բանասէր Յակոբ Պետրոսեան (1928-2017), հետեւողականօրէն իր հայնագրութեան կիզակետը դարձուց Գեղամն ու անոր գրականութիւնը: Ան նախ մենագրութիւն մը լոյս ընծայեց անոր մասին (Երեւան, 1983), յետոյ վերահրատարակեց փարիզեան «Տարօնի աշխարհ»-ը՝ զայն համարելով ու գիտականօրէն վերանայելով (Երեւան, 1995), այնուհետեւ ալ հատորային կողքի մը տակ մէկտեղեց Գեղամէն նորայայտ կամ ցրուած ինչ-ինչ էջեր («Տարօնի վանքերը. Ուղեւորի յիշատակներ», Երեւան, 2003): Այս վերջին գիրքը ունի երեք բաժիններ: Ա. մասը նուիրուած է Տարօնի վանքերէն ոմանց մանրամասն նկարագրութեան: Բ. մասը հեղինակին ճամբորդական գրառումներն են՝ Մուշէն մինչեւ Կիլիկիա ու Կովկաս: Իսկ Գ. մասը կը պարփակէ հայրենի բնաշխարհը գծող պատկերներ ու յօդուածներ: Կրնանք անվարան ըսել, որ Յակոբ Պետրոսեան թե՛ տուաւ Մշոյ Գեղամին, վերակենդանացուց զայն, դուրս բերաւ անոր անունը մոռացութեան փոշիներու տակէն:...

Գեղամի գրագէտի դիմագծութեան մէջ ցցուն է նաեւ բանահաւաքի երեսը: Ան հաւատարիմ հետեւող մըն էր Սրուանձտեանցի: Ազգագրագէտներ ու բանագէտներ (բանահիւսութեան հետազօտիչներ) կրնան լայնօրէն օգտուիլ իրմէ՛ եթէ գրուի հակեւ անոր հարուստ ժառանգութեան ու վաստակին վրայ (շատերը՝ անտիպ, արխիւային թղթապանակներու մէջ՝ Երեւան, Պէյրութ եւ այլուր), ուր պիտի գտնեն հեքիաթներ, առածներ, սասցուածքներ, ժողովրդական երգեր, պարերգեր, ասանդակներ, հարսանեկան գովքեր, հանելուկներ, մանկախաղեր եւ այլն, եւ այլն: Այս բնոյթի իր գործերէն մին է 400 էջանի «Մշոյ գաւառական լեզուի բառեր»-ու հաւաքածոն, ուր «բացի բացատրութիւններէ, հեղինակը բառին դիմաց գրի առած է բոլոր այն առածներն ու ասացուածքները, որոնք այդ բառով կը կազմուին: Բառարանին մէջ տեղ գտած են բոյսերու, թուփերու, ծաղիկներու, տնական իրերու, երկրագործական գործիքներու անունները, բացատրութիւնները եւ անոնց շուրջ եղած լեզուական արտայայտութիւնները» (Կ. Մասունի): Գործին կցուած է Տարօնի բարբառիկ բերականութիւնն ալ:


Ուրիշ գործ մըն է «Մշոյ Մտրատատուր Մ. Կարապետ»-ը (1500 ձեռագիր էջ), որ համանուն վանքին ու Տարօնի բեմին այլ վանքերուն պատմութիւնն է՝ քրիստոնէութեան այգաբացէն մինչեւ 1907: Հսկա՛յ աշխատանք:

Երախտագիտութեան արժանի այլ գործ մըն է Տարօնի վանքերու հնադարեան ձեռագրերու «Յիշատակարան»-ներու ընդօրինակութիւնը, գոր Գեղամ գրուի համար է մեծ համբերութեամբ, միջնադարեան վանականներու նմանողութեամբ: Այս գործին առաջին տետրակը կորսուած է, իսկ երկրորդը առանձին կը բովանդակէ աւելի քան 800 յիշատակարանի արձանագրութիւն:...

Չմոռնանք «Վիճակագիր Մշոյ առաջնորդական բոլոր թեմին» խորագրեալ մանրամասն տեղեկագիրն ալ, գոր Գեղամ պատրաստուած է 1902-ին, անսալով Պոլսոյ պատրիարքարանի թելադրանքին: Թանկարժէք փաստաթուղթերու 200 էջանի այս ժողովածուին մէջ տրուած են շուրջ 200 քաղաքներու, արաններու եւ գիւղերու դպրոցներուն, եկեղեցիներուն եւ անոնց պաշտօնեաներուն թուաբանակն ու անունները:

Կը տեսնէք, թէ մեր պապերը, դժուարին, ճնշիչ ու հալածական պայմաններու տակ իսկ ինչպէս կ'աշխատէին, կը ստեղծագործէին: Արդեօք հողին ո՞ւմն էր, որ թռիչք կու տար իրենց, թե՛ կենդանի լեզուին յուռութքը:...

Հակէպ




# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՐՈՅ ՅԵՆՔՈՎ «ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ԱՆԳՂԵՐԸ» ՎԵՊԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵՄՆ

Տոթոգ Փաուլո Գազազեան իր հեղինակած ֆրանսերէն «Իսթանպուլի Անգղերը» («Les Vautours d'Istanbul») -Editions Saer Almashrek, Beirut, 2016, 620 pages) (Մասը էլմաշրիք հրատ. Պէյրութ, 2016, 620 էջ) խորագրեալ վեպով կը ներկայացնէ հայուիի մը սիրոյ պատմութիւնը Առաջին Աշխարհամարտի դէպքերու պատմութիւն մէջ, թուրք ու գերմանացի կարգ մը զինուորականներու եւ քաղաքական մարտոց կեցուածքներուն առընթեր Հայկական Դատին, Հայ Ազգին եւ Հայոց Յեղասպանութեան նկատմամբ:



Գերմանացի գնդապետ Հանս Կրիպեր կը բացայայտ Միջին Արեւելքը Գերմանիոյ եւ Օսմանեան Պետութեան միջեւ ռազմական դաշինքի գոյութեան իրականութեան լոյսին տակ: Կարինէ Ահարոնեան երիտասարդ եւ գեղեցիկ հայուիին, իր քոյրերուն հետ ամուսնութեան կը պատրաստուէին: Սակայն Առաջին Համաշխարհային պատերազմի բռնկումը կը փոխէ անոնց կեանքը՝ միադարձելով զանոնք եւ ստեղծելով սիրոյ պատմութիւն մը, պատերազմի, կոտորածներու եւ ողբերգութիւններու յետապատառին վրայ: Այս պատմութեան ընդմէջէն հեղինակը կը փոխանցէ հայ ժողովուրդի պատգամն ու ապագայի յոյսերը: Անգլիական, ֆրանսական եւ ատուրիական

արխիւներուն մանրակրկիտ հետազոտութիւններու միջոցով ան կը նկարագրէ Հայոց Յեղասպանութեան փուլերը, որ մէկ դար ետք տակաւին կը մնայ անպատիժ:

Կարինէն եւ երկու քոյրերը դուարներն են Եղեսիոյ մէջ առեւտրական գործունէութիւն ունեցող Յակոբ Ահարոնեանի, որոնք բարեկեցիկ կեանք մը կ'ապրին այդ քաղաքին մէջ: Անոնք կը մասնակցին քաղաքին հայկական եկեղեցական ու ընկերային կեանքին: Այստեղ չենք անդրադառնար սիրոյ պատմութեան, այլ կը կեդրոնանանք վեպին մէջ նշուած հայ ազգի արժանիքներուն եւ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ օտարներու կարծիքներուն, մանաւանդ գերմանացի գնդապետ Կրիպերի:

Թուրք նաւավար Ֆուատ Հագան Կրիպերն ու Վասսալը կը բերէ Կ. Պոլիս, ուրկէ ձիերով անոնք կ'այցելեն թրքական զինուորական կառոյցները՝ գործունէներն ու մարզումի վայրերը: Անոնք նախ կը մեկնին Անատոլու՝ Մեծ Հայք եւ ապա կ'անցնին Սիւ, ուր հիւրը կ'ըլլան հայ քահանայի մը:

Միսի մէջ Կրիպեր հայ քահանայ Տեր Մովսէսի հետ գրոյցի ընթացքին կ'ըսէ թէ ցնցում է այն ինչ որ լսած էր հայոց կրած տառապանքներուն մասին: «Հայոց դէմ բռնաբարութիւնները, առեւանգումները, բռնագաղթերը սովորական դարձած էին սուլթանին լուծին տակ: Միսիոնարները, հիւսիսայիններն ու ղեսպանները ամէն տարի մոր միջադէպերու մասին կը հաղորդէին: Այս ամէնը դժբախտաբար թուրքերը այնպէս կը տարածեն լուրերը, թէ անապատներու մէջ պատահեր են, այնպիսի ոյժերու հաշտ աչքերուն առջեւ, ինչպէս Ֆրանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Անգլիոյ, որոնք զբաղած են պատերազմի մէջ իրենց սեփական շահերով» (էջ 29): Այդ իրավիճակին մէջ ոչ մէկ արգելք կար գրուցելու Օսմանեան Պետութեան սովորական բառաբացիներու հետ: Ուստի, գնդապետ Կրիպեր կը գրուցէր հայերու հետ համոզում ըլլալով որ միայն անմիջական գրոյցը պիտի լուստորէր զինք եւ բարարարէր իր հետաքրքրութիւնը:

Փաուլո Գազազեան թուրքերու կեղծ վարմունքին մասին հետեւեալը կ'ըսէ. «Թուրքերը միշտ բարի ու քաղաքավար, բարեհամբոյր կերպով կ'ընդունէին օտար հիւրերը» (էջ 31):


Կրիպեր երբ իրեն օգնական հարիւրապետ Իւրիսի Վասալի հետ Մերսինի մարահանգիստը կ'այցելէ, հարց կու տայ թուրք նաւավար Հագանի թէ թուրքերը ինչպէս կրնան պաշտպանել այդ մարահանգիստը, եթէ անգլիական ռազմաւանդներու յարձակումին ենթարկուի: Աւելի գործնական կ'ըսէ թէ Կրիպեր նոյն հարցումը կը հարցնէ Գերմանիոյ հիւսիսայիններէ՝ երբ հիւսիսայիններն մէջ անոնք կը գրուցէին: Կրիպեր ոչ մէկէն պատշաճ պատասխան կը ստանայ: Ապա խօսակցութիւնը կը կեդրոնանայ քաղաքին փոքրամասնութիւններու ապահովութեան վրայ, որու մասին հիւսիսայինները կ'ըսէ. «Կուգի ըսել ճշմարտութիւնը թէ ինչ կը կատարուի փոքրամասնութիւններուն հետ, այսինքն՝ յոյներու, հայերու, պղծերիացիներու, պուլկարներու եւ արաբներու: Յստակ է որ Կիլիկիոյ եւ Անատոլիոյ մէջ, սովորական դարձած է որ հայերը կ'ըլլան գոհերը...» (Չեշտադրումը մեր կողմէ,- Յ.Բ.): Կրիպեր կ'ըսէ թէ հարցը այդպէս է, որովհետեւ հայերը անգլիացիներու հետ կը գործակցին: Գերմանիոյ հիւսիսայինները համաձայն չի գտնուիր եւ կը հակադրէ. «Ամենեւին, անոնք շատ գործունէ մարդիկ են ընդհանուր առմամբ, ունին բարգաւաճ առեւտրի գործարքներ: Բան մը որ թուրքերու չար նախանձը գրգռած է: Հայերը թրքական տիրապետութեան տակ ճնշուած ըլլալով, քիչ մը ինքնավարութիւն խնդրած են ինչպէս նաեւ ազատութիւն: Մի՛ մոռնար որ անոնք քրիստոնէաներ են» (էջ 46):

Կրիպեր եւ Վասալ շարունակական ժողովներ կը գումարէին թուրք եւ գերմանացի պատասխանատուներու հետ, ի պատրաստութիւն իրենց Պերլին դրկելիք գեկոյցին, որ պիտի ընդգրկէր իրենց տեսածներու, լսածներու եւ սպասելիքներու արդիւնքները ռազմական ճակատներու վերաբերեալ: Անոնք կը քննէին նաեւ ներքին անկայունութեան պարագաները, որոնք կը ծագէին ապստամբ հայկական նահանգներու իրավիճակէն: Հոս տեղին է իշխել Վանի հայոց ապստամբութիւնը, Շապին Գարահիսարի Հերոսամարտը, Եղեսիոյ հերոսամարտը, Մոխրաբերդի Դիմադրութիւնը եւ այլ վայրերու փոքր ապստամբութիւնները:

Կարինի մէջ Գերմանիոյ հիւսիսային Շեյքուր Ռիսթըր մտահոգիչ հեռագիր մը կը դրկէ Կ. Պոլսոյ գերմանական դեսպանատուն: «Հայերու նկատմամբ վատ վերաբերմունք կը դրսեւորուի եւ անոնց քաղաքականութիւնը պաշարուած են թուրք ոստիկաններով» կ'ըսէ հեռագիրը: Ռիսթըր կ'աւելցնէ. «Օսմանեան Պետութեան պաշտպանութեան նախարարութեան յայտարարութիւնը պայթումի ազդեցութիւն ունեցաւ: Հրամանով մը ան հայ զինուորներն ու ոստիկանները կը զրկէր զէնք կրելու իրաւունքէն: Թուրքերը հայ զինուորները ճանապարհաշինութեան կամ այլ երկրորդական յանձնարարութիւններ կատարելու կը դրկեն: Հայ համայնքը եւ եկեղեցին վրդոված էին այս որոշումին պատճառով, որովհետեւ հայ երիտասարդները պետութեան երդում տուած էին օսմանեան հայրենիքին հանդէպ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու» (էջ 403):

Հայ զինուորները զէնք կրելու իրաւունքէն զրկելու հրամանը մէկ նպատակ կը հետապնդէր՝ թուրքերը հայ զինուորներուն կը հրամայէին խրամներ փորել ճակատներու վրայ ու երբ այդ արարքը վերջ կը գտնէր, թուրք սպաները հրաման կու տային հայ զինուորները կրակոցներով սպաննել եւ իրենց փորած փոսերուն մէջ թաղելով ծածկել: Վատահարք օտարներն ու մասնաւորաբար գերմանացիները այս երեւոյթին ակնատես եղան, սակայն...

Գերմանական զինուորական պատուիրակուրթիւնը՝ Հանս Կրիպեր, Իւրիսի Վասալ եւ Ֆուատ Հագան իրար միջեւ կը գրուցեն հայ բռնագաղթը՝ արձաններու հարցին մասին, երբ անոնք դէպի Խարբերդ իրենց ճամբուն վրայ կը հանդիպին հայ բռնագաղթուածներու կարաւանի մը: Թրքազգի Հագան կ'ըսէ. «Կուգի ձեզի խօսիլ հայերու մասին, որոնց գրեթէ ամէն օր կը հանդիպինք: Գիտեմ որ, ինչ որ դուք ալ կը տեսնէք, զգուցի է: Բնաւ չեմ հասկնար եւ չեմ կրնար արդարացնել կառավարութեան ըրածը: Սկիզբը այդ պարզապէս բնականութեան տեղափոխութիւն էր, ենթադրաբար՝ որպէս նախագոյշական միջոց, քանի որ հայերը լաւ յարաբերութիւններու մէջ էին ռուսներուն հետ: Բայց հիմա կը տեսնեմ որ ամէն ինչ ողբերգական շրջադարձ ստացած է: Այս անգի կը մնանի կոտորածի, եւ ռազմական գործողութիւն է: Ես շատ կ'անցնամ եւ չեմ գիտեր թէ ի՞նչ կը կատարուի: Հաւատալիք որ ես որեւէ բան տեղեակ չեմ» (էջ 489-490):



Կրիպեր հետեւեալը կը պատասխանէ. «Ձիս ամէնէն անգի տանջողը հայ զինուորներու կոտորածն է: Այս մեզի համար անտանելի էր, քանի որ անոնք օսմանեան բանակի համագետ կը կրէին: Անոնք հայ ազգի երիտասարդներ են, որ արձագանգած էին կառավարութեան կոչին՝ պաշտպանելու իրենց երկրին սահմաններն ու Օսմանեան Պետութիւնը: Դուք ձեռ սեփական զինուորներու պաշտպանութեան տակ էք քանի որ կը պատկանիք այլ ցեղի եւ այլ կրօնքի: Այս ամէնէն սարսափելի յանցագործութիւնն է, որ կառավարութիւնը կրնայ ընել իր քաղաքացիներուն դէմ: Սա անհասկնալի է, մանաւանդ մեզի՝ երոպացիներու: Անտառին մէջ ջարդուած այդ հայ զինուորներու պատկերը երբեք չի ջնջուիր մեր յիշողութենէն: Հապա ի՞նչ պիտի ըսէք այն կիներուն եւ երեխաներուն մասին, որոնք անապատներուն մէջ առանց սնունդի կը քայլեն շարունակ: Անոնք դատապարտուած են մահուան: Իսկապէս այս դաւաճանութիւն է սեփական քաղաքացիներու նկատմամբ: Այս բոլորը մեզի համար անհասկնալի են: Ես նոյնիսկ կ'անցնամ սպայի այս համագետը կրել» (էջ 490):

Գնդապետ Հանս Կրիպեր պատերազմի վերջին ամիսներուն կ'այցելէ Խարբերդ ու գրոյց կ'ունենայ տեղւոյն գերմանացի միսիոնար Հենանի (այլ աղբիւրներու մէջ կը նշուի Էհման,- Յ.Բ.) հետ: Վերջինս արդէն քսան տարիէ կը ծառայէր Խարբերդի գերմանական որբանոցին իբրեւ տնօրէն: Ան Կրիպերի կ'ըսէ թէ հայերը բռնագաղթուել առաջ քաղաքին շարժիչ ոյժն էին: Ապա կ'աւելցնէ. «Որովհետեւ, սիրելի՛ գնդապետ, հայկական բռնագաղթերն ու կոտորածները սկսելէ ետք, թրքական իշխանութիւնը այլեւս չէր ուզեր որեւէ դպրոցական գործունէութիւն, կրօնական ծառայութիւններ կամ միսիոնարական առաքելութիւններ: Կուգի երկիրը բոլորովին իսլամացնել: Մենք ստիպուած պիտի ըլլանք հեռանալ: Հայերն են որ ստեղծեցին դպրոցները, հիւանդանոցները եւ դարմանատուները: Այժմ անոնք կը փակեն ամէն բան ու կը հեռանան» (էջ 568):

«Ուրեմն հայոց պատճառաւ կը փակուի ամէն ինչ», կ'ըսէ Կրիպեր: «Անկեղծօրէն ըսելով, աշակերտներուն մեծամասնութիւնը, դպրոցներուն ուսուցիչներու մեծամասնութիւնը, հիւանդանոցներու անձնակազմի մեծամասնութիւնը հայեր էին: Ի հարկէ, կային թուրքեր, բայց անոնք փոքրամասնութիւն կը կազմէին» (էջ 568):

Վերջարարութեան Կրիպեր եւ Կարինէ կ'ամուսնանան: Այս վաւերագրական վեպը սիրոյ յենքով կը ներկայացնէ Հայոց Յեղասպանութեան ժամանակաշրջանի իրականութիւնը օտարներու կողմէ դիտուած, ներառեալ թուրք զինուորականը, որ հայանպաստ դրական մօտեցումներ կ'ընդգրկէ, որովհետեւ անոնք կը դատապարտեն թրքական բռնութիւնները հայոց նկատմամբ:



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA-EASTERN

# ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

## Հոգևորականներու Ժողովը 2026-ի Թեմական Համագումարին

Արեւելեան Թեմի տարեկան Հոգևորականներու Ժողովը տեղի ունեցաւ Ապրիլ 28-30, Միլուոքի, Ուիսքոնսին նահանգին մէջ, 124-րդ Թեմական Պատգամատրական Ժողովին առիթով, որ հիւրընկալուած էր քաղաքին Ս. Յովհաննէս Սկրտիչ եկեղեցոյ կողմէ: Ժողովին նախագահեց Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Մեսրոպ Եպս. Պարսամեան, եւ ներկայ էին Թեմի գրեթէ բոլոր գործող հովիւները, ինչպէս նաեւ հանգստեան կոչուած հոգևորականներէն ոմանք:

Համագումարի ատենապետն էր Արժ. Ս. Յովհան Խօճա-Էյնաթեան, փոխատենապետ՝ Արժ. Ս. Ղեւոնդ Աճեմեան, իսկ հայերէն եւ անգլերէն քարտուղարներ՝ համապատասխանաբար Արժ. Ս. Ոսկան Յովհաննիսեան եւ Արժ. Ս. Աւետիս Գալայճեան: Հիւրընկալ եկեղեցոյ հովիւ Արժ. Ս. Կիրեղ Համբարձումեան ողջունեց մասնակիցները:

Առաջնորդ Սրբազանը ներկայացուց տարուան ընթացքին իր հովուական այցելութիւններու աշխոյժ ծրագիրը, որ զինք հասցուցած է Թեմի բոլոր ժողովներուն ու առաքելական համայնքներուն: Ան նաեւ ուրախութեամբ անդրադարձաւ սարկաւագութեան եւ փոքր աստիճաններու մէջ 200-է աւելի ձեռնադրութիւններ կատարած ըլլալուն մասին, ինչպէս նաեւ իր ընկեր Eastern Diocese LogoNEW copy.png-այլին ցանցերու հաղորդակցութեան եւ քարոզչական գործունէութեան մասին:

Մեսրոպ Սրբազան անդրադարձաւ նաեւ Ս. Վարդան Մայր Տաճարի վերանորոգման ծրագրին արձանագրած յառաջդիմութեան: Աւելի ընդհանրապէս, ան շեշտեց քահանաներու սրբազան կոչումը՝ ժողովուրդին Քրիստոսի ներկայութիւնը բերելու, եւ անընդհատ վերանորոգումի, երբայրասիրութեան ու մշտական աղօթքի մէջ ներգրաւուած մնալու կարեւորութիւնը:

Հոգևորականները նաեւ տեղեկութիւն ստացան Թեմական Առաքելութիւններու բաժանմունքին նորագոյն նախաձեռնութիւններուն մասին, ինչպէս նաեւ Թեմի նոր Աւետարանչական ծառայութեան՝ «Մանանա-Հոգիի Սնունդ» անունով յայտագրին մասին, որ շուտով պիտի սկսի ծուխերու մէջ: Ներկայացուցաւ նաեւ «Ծխական կողմնացոյց-Parish Compass» համալսարանական նախաձեռնութիւնը, որուն նպատակն է ուսանողները կապել իրենց մօտ գտնուող Հայ Եկեղեցիներուն հետ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն ժամանած երկու հիւր հոգևորականներ՝ Արժ. Ս. Զաքարիա Բարդուղեան եւ Արժ. Ս. Մովսէս Սարգսեան, խօսեցան հայրենիքի վերջին զարգացումներուն եւ ներկայ մտահոգութիւններուն մասին:

Հոգևորականներու Ժողովը արարեցաւ Ս. Յովհաննէս եկեղեցոյ մէջ մատուցուած Սուրբ Պատարագով, գոր մատոյց Արժ. Ս. Վարդան Հայրապետեան (որ ներկայիս կը կատարէ հովուական փորձառական ընթացքը Ուուսքըրի, Մասաչուսեց նահանգի Սուրբ Փրկիչ Հայ Եկեղեցիին մէջ): Պատարագի ասարտին կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Արեւելեան Թեմի մնչեցեալ հոգևորականներուն համար:

## Յոյսի Նոր Հոգին Կենդանացուց Թեմական Համագումարին Պաշտօնական Ընթրիքը

124-րդ Թեմական Պատգամատրական Ժողովին Պաշտօնական Ընթրիքը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Մայիս 1-ին, Փֆիսքըր Հոթելի շքեղ Imperial Ballroom սրահին մէջ, դարձաւ ոգևորիչ երեկոյ մը՝ լեցուն սրտագին գնահատանքներով: Հիւրընկալ ծուխը՝ Միլուոքիի Ս. Յովհաննէս Սկրտիչ եկեղեցին, ապահոված էր վայելուչ միջավայր մը՝ Արեւելեան Թեմի կեանքին մէջ նշանակալի ներդրում ունեցած եկեղեցական առաջնորդները պատուելու համար:

2026 թուականի «Տարուան Հայ Եկեղեցոյ Անդամներ» ընտրուեցան Արա Չերչեան եւ Դոն Քէյժեան՝ երկուքն ալ Ս. Յովհաննէս եկեղեցոյ երկարամեայ անդամներ: Արա Չերչեան պատուուցաւ Ս. Վարդան Մայր Տաճարի վերանորոգման ծրագրին եւ Հայաստանի մէջ բազմաթիւ կենսական ծրագիրներու հանդէպ իր նուիրումներուն եւ առատաձեռնութեան համար: Իր շնորհակալական խօսքին մէջ, Պրն. Չերչեան գովեց եկեղեցին՝ պահպանելուն համար հայ ինքնութիւնը եւ այն արժէքները, որոնք հայ ժողովուրդին կարեւորութիւն տուած են բարգաւաճելու Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Դոն Քէյժեան գնահատուցաւ Միլուոքիի հայկական եկեղեցական համայնքին մէջ իր առաջնորդութեան եւ իր հեռատես նուիրումներուն համար՝ 30 տարի շարունակ Թեմի Հայ Բեմի ճամբարին իր կարուածը տրամադրելով: Պրն. Քէյժեանի որդին՝ Արժ. Ս. Սահակ Քէյժեան, ծնողքին անունով ստացաւ մրցանակը եւ շնորհակալութիւն յայտնեց Թեմին՝ իր հայրը պատուելուն համար:

Նշանաւոր գիտնական Տրք. Ռոպին Տարիմի Եանկ պատուուցաւ որպէս այս տարուան «Հայերու Բարեկամ» դասական հայերէնի եւ հայկական աստուածաբանութեան ուսումնասիրութեան մէջ իր խորունկ ներդրումներուն համար: Տրք. Եանկ յիշեց իր կեանքի այն պահը, երբ առաջին անգամ հանդիպեցաւ Մովսէս Խորենացիի գրութիւններուն եւ ներկայացուցաւ «այնպիսի քաղաքակրթութեան մը, որ որքան հմայիչ էր, նոյնքան ալ ներգրաւիչ»: Ան շնորհակալութիւն յայտնեց ամբողջ հայկական համայնքին՝ զինք ընդունելու եւ իր գիտական աշխատանքը գնահատելուն համար, եւ յայտնեց իր փափաքը շարունակելու ամբողջ կեանքի ուսումնասիրութիւնը՝ հայկական ժառանգութեան մտաւոր եւ հոգեւոր գանձերը համաշխարհային լսարանին հասցնելու նպատակով:

Ծրագրի ասարտին, Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Մեսրոպ Եպս. Պարսամեան ջերմ շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ եկեղեցոյ հովիւ Արժ. Ս. Կիրեղ Համբարձումեանի եւ ծուխի կազմակերպիչ յանձնախումբին, ապա իր օրհնութիւնը փոխանցեց պատուաւերուն եւ ընթրիքի մասնակիցներուն:

Շքեղ երեկոյն յատկանշուեցաւ նաեւ աւանդական հայկական քանոնի երաժշտական կատարումով, գոր ներկայացուցին քոյրեր Լիլիա եւ Ալեքսանդրիա Եարալեան:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Խոր ցաւով կը տեղեկանանք, որ այս գրութեան պատրաստութեան պահուն մեզի հասաւ լուրը, թէ Տիրահայր Դոն Քէյժեան մահացած է 2026 Մայիս 14-ին:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք Տիրահայր Լիլիա եւ Քէյժեան ընտանիքին, աղօթելով, որ Տէրը մխիթարութիւն պարգեւէ անոնց: Թող Աստուած ընդունի Տիրահայր Իր երկնաւոր արքայութեան մէջ:

## Տիկնանց Միութիւններու Անդամները Համախմբուեցան 37-րդ Ժողովին

Արեւելեան Թեմի Տիկնանց Միութիւններու 37-րդ տարեկան ժողովը տեղի ունեցաւ Ապրիլ 30-էն մինչեւ Մայիս 2, 24 պատուիրակներու մասնակցութեամբ, որոնք կը ներկայացնէին 14 ծուխեր:

Ինչպէս 124-րդ Թեմական Ժողովն ու Հոգևորականաց Համագումարը, որոնք միաժամանակ տեղի կ'ունենային, Տիկնանց Միութիւններու ժողովը եւս գումարուեցաւ Միլուոքի, Ուիսքոնսին, քաղաքի Ս. Յովհաննէս Սկրտիչ Հայ Եկեղեցոյ հիւրընկալութեամբ: Այս տարին կը նշէր Տիկնանց Միութիւններու Կեդրոնական Խորհուրդին 40-ամեակը, որ հիմնուած էր 1986-ին:

Մասնակիցները լսեցին Տիկնանց Միութիւններու Կեդրոնական Խորհուրդին գործունէութեան տեղեկագրերը, ինչպէս նաեւ միութիւններուն աջակցութեամբ իրականացուող ծրագիրներուն մասին զեկուցումներ՝ ներառեալ Հայաստանի Մանուկներու Հովանաւորութեան Ծրագիրը եւ Վանաձորի Ծերանոցը: Ժողովը ներառեց նաեւ նիստեր՝ հանգանակութեան, ծառայութեան, տեղական միութիւններու ընդհանուր մարտահրաւերներուն եւ անոնց գտած լուծումներուն մասին:

Առաջնորդ Մեսրոպ Սրբազան այցելեց Տիկնանց Միութիւններու ժողովին եւ գրուցեց անդամներուն հետ: Ան նաեւ նախագահեց Ուրբաթ օրուան «Հրաշալի Կին» ճաշկերուոյթը, գոր Կեդրոնական Խորհուրդը կը կազմակերպէ ամէն տարի: Այս տարուան պատուեալն էր Ռամելան Քալաճեան՝ Ս. Յովհաննէս Սկրտիչ եկեղեցոյ նուիրեալ անդամ:

## ԾԵՄԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

### Մայրերու Օրուան Չեռնադրութիւններ Ուաշինկթընի Մէջ

Ուաշինկթըն Տի.Մի.՝ Ս. Մարիամ եկեղեցոյ հաւատացեալները անցեալ շաբաթավերջին դիմաւորեցին Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Մեսրոպ Եպս. Պարսամեանը՝ հովուական այցելութեան առիթով, որ նշուեցաւ Մայրերու Օրուան տօնակատարութիւններով եւ նոր սարկաւագներու ձեռնադրութեամբ:

Ներկայ էր նաեւ Գերշ. Ս. Վիգէն Արք. Այգազեան՝ Թեմի Նուիրակը եւ Միջ-եկեղեցական Տնօրէնը, որուն գրասենեակը կը գործէ երկրի մայրաքաղաքին մէջ:

Կիրակի, Մայիս 10-ի Սուրբ Պատարագի ընթացքին, Մեսրոպ Սրբազան 14 երիտասարդներ ձեռնադրեց կիսասարկաւագ եւ օրհնեց չորս երիտասարդ օրիորդներ՝ որպէս դարձաւ դասին նոր անդամներ, ինչ որ ան բնորոշեց իբրեւ յոյս ներշնչող նշան մը եկեղեցոյ ապագային համար:

«Անոնց պատրաստակամութիւնը՝ ծառայութեան համար առաջ գալու, յոյսով կը լեցնէ սիրտս», ըսաւ Առաջնորդ Սրբազանը: «Ասիկա գեղեցիկ նշան մըն է, թէ յաջորդ սերունդը պատրաստ է ծառայելու Տիրոջ եւ Իր սուրբ եկեղեցոյ՝ հաւատքով, խնայողութեամբ եւ սիրով»:

Մեսրոպ Սրբազան նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց ծուխի հովիւ Արժ. Ս. Յովսէփ Կարապետեանի եւ Երեցկին Դեմիֆոր Կարապետեանին, ինչպէս նաեւ ծուխի ղեկավարներուն, երգչախումբի անդամներուն, խորանի սպասաւորներուն եւ կամաւորներուն, որոնց ջանքերը նպաստեցին այս առիթին յաջողութեան:

Ան անոնց նուիրումը կոչեց «Քրիստոսի սիրոյ կենդանի վկայութիւն գործի մէջ» եւ աղօթեց ծուխի համայնքին շարունակական զօրացման եւ աճման համար, քաջալերելով հաւատացեալները՝ «յոյսով նորոգուած» եւ Քրիստոսի սիրով միացած առաջ ընթանալու:

## ՎԱՆԸ ՄԻԱՅՆ ԱՆՅԵԱԼԻ ՆԵՐՈՍԱԿԱՆ

(Շարունակուած 3-րդ էջէն)

մինչ 200 հազար վանեցիներ թրքական կոտորածներէն խուսափելու համար, կը նահանջեն ռուս բանակին հետ: Կրկին յուսահատութիւն, կրկին անգամ հայեր կը հարուածուէին բարեկամներէ ու կրկին անգամ պիտի հաստատէին որ հայը բարեկամ չունի: Կրկին գաղթ, կրկին տեղահանութիւն:

Գիմադրութիւնը այլեւս պարզ ռազմական գործողութիւն չէր. ան վերածուած էր ամբողջ ժողովուրդի ճակատագրական կեցուածքի, ուր կուսակցական տարբերութիւններն ու ներքին բաժանումները կը կորսուէին մէկ բարձր նպատակի՝ ինքնապաշտպանութեան եւ գոյատեւման դիմաց: Այդ համերաշխ ոգիով սնուած պայքարը շարունակուեցաւ շուրջ մէկ ամիս՝ մինչեւ այն պահը, երբ թրքական ուժերը ստիպուած եղան նահանջել Վանի շրջաններէն:

Եւ թերեւս Վանի հերոսամարտին ամենէն խոր պատգամը այսօր եւս կը հնչէ հայ ժողովուրդի կեանքին մէջ: Ան կը յիշեցնէ, թէ ազգի գոյատեւումը միայն ռազմի դաշտին վրայ տարած յաղթանակով չ'ապահովուիր, այլ՝ ազգային միասնութեամբ, քաղաքական հեռատեսութեամբ եւ սեփական ուժերուն հանդէպ անասան հաւատքով: Երբ ժողովուրդը մը իր ճակատագիրը ամբողջովին կը կապէ արտաքին ուժերու շահերուն ու փոփոխական կամքին, նոյնիսկ ամենամիայնուն յաղթանակները կրնան վերածուիլ ծանր կորուստներու:

Այս իմաստով, Վանը միայն անցեալի հերոսական յիշատակ մը չէ, այլ նաեւ զգուշացնող պատմական դաս՝ ուղղուած այսօրուան Հայաստանին: Ան կը պատգամէ, թէ ազգային անվտանգութիւնը, պետականութիւնը եւ հայրենիքի ապագան կը պահպանուին նախ եւ առաջ ներքին ամրութեամբ, համագային համախմբուածով եւ սեփական ճակատագիրը ինքնուրոյն կերպով տնօրինելու կամքով:

Պէլքուր

# ՎԷՍ ԱՆՍԱՄՊԼԻ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵԼՈՅԹԸ

Հովանավորությամբ Թեքեան Մշակութային Միության Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեանց՝ Գալիֆորնիոյ Լոս Անճելըսի Համալսարանի (UCLA) Վէն Լարային Քառեակը շրջապտոյտով մը ելոյթ ունեցաւ Ֆիլատելֆիոյ, Պոստոնի, Մոնթրէալի, Սաութֆիլտ Միշիկընի, Էն Արպըր Միշիկընի եւ վերջապէս Ալթաթիմա Գալիֆորնիոյ մէջ՝ 2026 թուականին:



Վէն Քառեակը ծնունդ առած է 2013 թուականին՝ գեղարուեստական դեկավար եւ գլխաւոր ջութակահար փրոֆէսոր Մովսէս Պօղոսեանի տքնաջան ջանքերով եւ ապագայի նկատմամբ իր ունեցած փայլուն տեսլականով:

Վերոյիշեալ շրջապտոյտի եզրափակիչ ելոյթը տեղի ունեցաւ Թեքեան Մշակութային Միության Ալթաթիմայի Պէշկէօքիւրեան կեդրոնի սրահին մէջ Կիրակի, 17 Մայիս 2026-ի երեկոյեան ժամը 5:00-ին: Կազմակերպողներն էին ԹՄ Միութեան Լոս Անճելըսի Մայր մասնաճիւղը, Մեծագոյն Լոս Անճելըսի մասնաճիւղն ու Փասատիմա-Կլէնտլի մասնաճիւղը:



Բացման խօսքով հանդէս եկաւ ԹՄ Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Միհրան Թումանյան: Ան բարի գալուստ մաղթեց ներկայներուն, շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք առիծի բաժին ունեցած էին ելոյթի կազմակերպութեան մէջ, յատկապէս՝ Արա եւ Սոնիա Պապայեաններուն, Միհրան Օգնայեանին, Աստղիկ Խանճեանին, Մայտա Քիրէճեանին եւ Հրանդ Վարձպետեանին: Հուսկ ապա հրաւիրեց Լարային Քառեակի երաժշտական դեկավար Մովսէս Պօ-

## ԳԵՐՈՐԳ ԲԷՕՅԿԵՐԵԱՆ

ղոսեանը, որ ընթացք տայ իր ծրագրին:

Ալթաթիմայի մէջ, մենք բախտատու էինք որ Լարային Քառեակի բարձրորակ ելոյթի կողքին ունկնդրեցինք նաեւ Հայկական արանդական գործիքային երաժշտութեան տպաւորիչ ելոյթ մը:

Ստորեւ անոնց մանրամասնութիւնները:

### Ա- Լարային Քառեակի Ելոյթը

Յոլեր՝ Կոմիտաս  
Երգ՝ Միհրան Թումանյան  
Ալայլոյս՝ Կոմիտաս (Մշակում՝ Ասլամազեան)  
Երգ՝ Գրիգոր Միւնի  
Հոյ Նազան Իմ, Կոմիտաս (Մշակում՝ Ասլամազեան) Կաքաւիկ, Կոմիտաս (Մշակում՝ Ասլամազեան) Նուագ՝ Հրայր Մուրատեան  
Գիմակահանդէսի Վարչը՝ Ա. Խաչատրեան

### Բ- Հայկական Աանդական Գործիքային Երաժշտութեան Ելոյթը

Աշխարհումս այս չիմ քաշի Տուտուկ՝ Հայկ Կարկալոյեան  
Քամանչա՝ Վարդան Պաղտասարեան  
Նուագ Ուտ՝ Անդրանիկ Բզիբեան  
Նուագ՝ Ս. Նովա, «Գարուն Աշխարհ» Քամանչա՝ Վ. Պաղտասարեան  
Երգ Անուշ Մերիկ՝ Հասմիկ Յարութիւնեան  
Երգ, Հասմիկ Յարութիւնեան, Քամանչա Վարդան Պաղտասարեան  
«Ես լսեցի մի անուշ ձայն» «Կռունկ»



Փակման խօսքով հանդէս եկաւ Միհրան Թումանյան: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր արուեստագէտներուն եւ հազարազիտ գիրք մը նուիրեց փրոֆէսոր Մովսէս Պօղոսեանին, առ ի գնահատանք իր տարած անճաման աշխատանքին համար: Նուէրը՝ պատկերազարդ գիրք մըն էր տպուած 1968-ին, Նիւ Եորքի Սուրբ Վարդան եկեղեցոյ օժան առիթով: Տեղին է յիշել, որ օծումը կատարուած էր ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս.Տ. Վազգէն Առաջինին:

Միհրան Թումանյան ապա հրաւիրեց բոլոր ներկայները մասնակցելու համեստ հիւրասիրութեան եւ գրուցելու միեւնոյն ժամանակ արուեստագէտներուն հետ:

Որակաւոր այս ձեռնարկին համար, յատուկ շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել կազմակերպիչ յանձնախումբի բոլոր անդամներուն:

Վարձքերնիդ կատար:

## ՄԱՀԱԶԴԻ

### ՄԱՏԼԷՆ ՏԱՂԱՎԱՐԵԱՆ ՍԱԹՎԱՐԵԱՆ

1961-2026

Մրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ տիկնոջ մօր, քրոջ եւ հարազատին՝ ՄԱՏԼԷՆ ՍԱԹՎԱՐԵԱՆԻ վաղաժամ մահը որ պատահեցաւ 4 Մայիս 2026-ի կէսօրէ ետք:

Հանգուցեալի եկեղեցոյ կարգը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 21 Մայիս 2026, կէսօրուան ժամը 12:00-ին, Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Կարմիր եկեղեցոյ մէջ, ապա գերեզմանի կարգը նոյն գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068

Սգակիրներ  
Ամուսինը՝ Գրիգոր Սաթամեան  
Չաւակը՝ Լեւոն Սաթամեան  
Քոյրը՝ Այտա Աւանեսեան  
եւ համայն Սաթամեան, Տաղավարեան, Աւանեսեան, Ճռեան ընտանիքներ եւ հարազատներ:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝  
Krikor and Madlen Sataman  
Scholarship Fund  
55 East 59th Street  
New York, NY 10022



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՄՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

### ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Սամոյ հայրենակցական միութեան նոր վարչութեան եւ դիւանի ընտրութիւնը տեղի ունեցաւ կիրակի, 10 մայիս 2026-ին:

Առաջին նիստով քննարկուեցան միութեան գործունէութեան վերաբերեալ ներկայացուած առաջարկներ:

Միութեան վարչութեան նորընտիր անդամներն են՝	
Միմոն Օհանեան՝	ատենապետ
Մասուն Սիմոնեան՝	փոխատենապետ
Տօնիկ Տօնապետեան՝	ատենադպիր
Մեան Պետրոսեան՝	զանձապահ
Վրէժ Վարդանեան՝	հաշուապահ
Մեան Կարապետեան-Աղամեան՝	խորհրդական
Սեզա Ռշտունի՝	խորհրդական
Արսէն Մարատեան՝	խորհրդական
Բաֆֆի Սուսանի՝	խորհրդական

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

